

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ե. — ՇՐՋԱՆ Ժ.

ՏԱՐԻ Ժ. — ՄԱՅԻՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Եկեղեցական դասակարգութեան մէջ Եպիսկոպոսաց քան զքահանայս եւ ըղսարկաւագունս ունեցած բարձր աստիճանը որքան ամենուն ակնյայտնի եւ զգալի է, սակայն աստիճանի բարձրութեան հետ ծորդ վսեմ՝ վարուկ միանգամայն ծանր պաշտօնի պարտաւորութիւնքը եւ նուիրական յատկութիւնքը այնքան բազմաձանօթ եւ պարզ չեն ներկայանար առհասարակ ամեն մարդոյ, կամ թէ ասեմք՝ ժողովրդեան ընտուար մեծամասնութենէ գոգցես զանխուլ եւ անգիտելի վիճակում կգըտնուին։

Եպիսկոպոսութեան ձեռնադրութիւնը եւ աստիճանը թէեւ միեւնոյն կերպով կշնորհուի արժանացողաց, սակայն կառավարչական բաժանմանց եւ պարտաւորութեանց մէջ տարբերութիւնք եւ ստորադրական կարգեր կան, որոց համաձայն Եպիսկոպոսաց պաշտօնի եւ պարտաւորութեանց մէջ առաւելութիւնք կան՝ ինչպէս նաեւ իշխանական նախադասութիւնք կանոնադրուած են, այսու ամենայնիւ ինչպէս Եկեղեցական դասակարգութեան իւրաքանչիւր աստիճանի՝ նոյնպէս այս իմա Եպիսկոպոսական աստիճանի բուն եւ իսկական նշանակութիւնը միեւնոյն է, զորս բացատրելոյ համար հարկ է ձեռնադրութեան մաշտոցէն քաղել մանրամասն գիտելիքը, բայց այս շատ երկար եւ մեր բուն նպատակէն արտաքոյ կլինի եթէ լիովին կատարել ըղձամբ, սակայն Եպիսկոպոսական ձեռնադրութեան Կանոնին մէջ Եպիսկոպոսաց ուղղեալ հետագայ խրատը եւս ըստ բաւականին կրնայ սոցա պարտքը նկարագրել։

Ա.հաւասիկ։

Դարձեալ Խրատ Ի գէորգ-Ի։ *).

«Տես եղբայր, առ ի լինել քեզ խաղաղարար եւ ժուժկալ, յորժամ լինիցիս ի սենեակ քո՝ կամ աղօթեա կամ ընթերցիր, եւ ուր լինիցիս՝ մի մոցէ անդր կին։ Յամենայն կրօնաւոր կանանց զգուշացիր. սիրեա զնոսա ողջախոհութեամբ, եւ պարսպեա զանձն քո ի պատրանաց, եւ մի՛ ի քեզ լինքն ապաստան լինիր. զի ոչ ես ուժեղ քան զՍամիսոն եւ ոչ հանճարեղ քան զՍողոմոն։ Յորժամ կամիցիս մտանել ի տուն կամ ի յարկս կանանց՝ առ ի խօսել եւ մխիթարել եւ յայտնել նոցա զկարգս ուղղութեան, մի՛ մտանիցես ի ներքս դրանց նոցա միայնակ, այլ կալցիս ընկերակիցս զկնի քո, զի մի՛ ոք տեղի գոցէ չարախօսել ի քոց մերձաւորաց, քանզի պարտ է Եպիսկոպոսին կալ. ազատ ի մեղադրանաց, եւ վկայութիւն ունել յամենայնի, զի մի՛ ոք ի մարդկանէ՛ համարձակեսցի բամբասել զնա, ըստ որում եւ գրեալ է յԱւետարանին՝ մի՛ գայթակղեցուցանել զոք։ Յամենայն աւուր ազաչեա եւ յօժարամիտ կամօք ցոյց ժողովրդեան քում զօրէնս Աստուծոյ։ Մեկնեա զգիրս սուրբքս յամենայն դէպս եւ դիւրալուր արա զնոսին, ըստ որում եւ յԱստուծոյ տուեալ է քեզ շնորհդ։ Զգիրս սուրբ ընթերցիր միշտ, եւ անխափան լիցին ի ձեռս քո, եւ եւս քան զեւս հաստատեա՛ ի միտս քո զընթերցեալսն. եւ յորժամ խափանիս ի կարդալոյ, յաղօթս պարապեսջիր։ Հայեաց միշտ յանձն քո, եւ եթէ տեսանես ինչ յորում սխալեալ լիցես՝ ի բարին դարձո, իսկ եթէ ի բարին զքեզ գտանիցես, եւս առաւել յաւելջիր ի նոյն։ Զգոյշ լեր իմաստութեամբ ուսուցանել միշտ. ուսիր հաստատուն հաւատով, զի ուսուցես ամենայն լսողաց առանց նախատանաց, եւ կարող լիցիս կարկել զամենայն հակառակողս։ Յիշեա եւ կացցես յայն ինչ զոր ուսար՝ ի հրամայեալն քեզ ի ձեռնադրութեան քում։ Պատրաստ լիջիր հանապազ տալ պատասխանի՝ վասն յուսոյն որ ի քեզ է, եւ գործք քո մի՛ ապականեսցեն ըզքեզ եւ զբանս քո, մի՛ գուցէ յորժամ խօսիցիս յեկեղեցւոջ քում՝ գտանիցի ոք անդ, որ պատասխանի տացէ քեզ եւ ասասցէ՝ թէ ասես եւ ոչ առնես։ Արդ զի մի՛ ոք ասիցէ՝ թէ ընդէր ոչ առնես զոր ասես դ, զգուշացիր վարդապետ՝ մի՛ տանել զորովայն քո ծանրացեալ, եւ մի՛ ասասցեն թէ ուսուցանես պահել՝ եւ ուտես։ Գողութիւն եւ ագահութիւն ոչ թաքչին, զգուշացիր ոչ գողանալ ագահութեամբ զիրաւունս Աստուծոյ։ Վասն այսորիկ խրատէ Առաքեալն՝ զանձն քո օրինակ տալ հօտին, զի զքո բարուք կարգին զսոլորու-

(*) Նախ քան զայս մի խրատ ևս կայ՝ որ առաւել մեկին և պարզապէս՝ ուր և իցէ մի վիճակի վերայ ձեռնադրեալ եպիսկոպոսաց ուղղեալ է և իոլորը խմիսին Սահմանք Ի խրատ գէորգ-Ի ընդ պայ Հայրապետն եպիսկոպոսին ընդ ձեռնադրեաց վերնագիրը ունին, և նոր ձեռնադրուած եպիսկոպոսունք երբ պատրաստուին իւրեանց վիճակները վերադառնալ՝ Սրբազնագոյն Հայրապետն պարտաւոր է յիշեալ խրատները առանցել։

թիւնն օրինակ առցեն որդիքն քո՝ եւ ըստ բարի գործոցն զոր տեսանեն ի քեզ եւ յընթացսն քո՝ ճանապարհորդակից քեզ լինիցին՝ եւ զքեզ յամենայն ի բարիս ի վիայութիւն առնուցուն։ Արդ բարիոք խրատեա՝ որպէս զի քո խոնարհութիւնդ նուաճեսցէ զնոցին զայրացումն, քո սիրելութիւնն զօրացուսցէ զնոցին սէրն. զի միանգամ խրատեալք՝ մի եւս կարօտիցին երկրորդին։ Բարիքն ճաշակեսցեն զխրատուն քո քաղցրութիւն. իսկ չարքն ըմբերանեսցին ի քէն զայրացմամբ՝ որպէս զի զգուշասցին սիրել զհոգիս՝ եւ կալցին ատելութիւն առ մեզ։ Տես՝ մի տրտմութիւն անհաւանութեան հեղգացուսցէ զքեզ ի խրատելոյ զժողովուրդ քո՝ զի մի ոք ասասցէ՝ թէ սա վասն տգիտութեան կորեաւ։ Յորժամ հատանես զվէրսն՝ մի վնասեսցես անարատին՝ այս ինքն արդարութեամբ դատեսցես եւ ըստ ճշմարտութեան։ Այլ եւ խրատեմ զքեզ ոչ պահանջել զամենայն սխալանսն որոց առ քեզ յանցաւորացն՝ եւ մի երբէք պահեսցես ոխս՝ այլ հանապազ ի քո իրաւունդ խառնեա զողորմութիւն՝ զի կարող լիցիս ասել ըստ մարգարէին. Յողորմութիւն եւ յիրաւունս օրհնեցից զքեզ Տէր։ Երկիւղ հովուաց հաստատեսցի առ քեզ՝ եւ սէր ճշմարիտ մնասցէ ի քեզ՝ զի զհանդարտսն հովուեսցես սիրով՝ եւ որք խռովարարքն լցեն եւ ամբոխիչք՝ սաստիւ պատուհասեալ ածցես յուղղութիւն։ Մի ակն առցես երեսաց մարդոյ ի դատաստանի. մի փարթամն պատրեսցէ զքեզ յաչառել եւ մի աղքատն ստրջացուսցէ զքեզ ողորմել յիրաւունսն որ լինին յատեանն Աստուծոյ։ Զգանձս սուրբ եկեղեցւոյն զոր ընկալար՝ պահեսցես եւ զգուշութեամբ բաշխեսցես. այլ եւ ոպասաւորեսցես հաւատով՝ զի մի ոք կարող լինիցի բամբասել զքեզ. եւ կացցես իբրեւ զօտար ի բաշխելն՝ որպէս զի բանն Տեառն լցցի առ քեզ զոր ասէ. Ո՛վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն՝ զոր կացուսցէ Տէր ի վերայ տան իւրոյ՝ տալ ծառայիցն կերակուր ի ժամու։ Օտարընկալ լեր եւ ողորմած՝ եւ երկիւղիւ տուր զինչս քո աղքատաց՝ այնչափ որքան զօրութիւն քո կարող իցէ ժուժկալել. զի որ խնու զականջս իւր ընդդէմ բարբառոյ աղքատաց՝ եկեսցէ ժամանակ՝ զի ինքն աղաղակեսցէ՝ եւ ոչ լինի լսելի։ Այրիք եւ որբք եւ փոքունք խնդասցին ի քեզ եւ ասասցեն՝ թէ ունիմք հովիւ խոնարհ եւ գթած։ Զդատաւորսն որք թիւրութեամբ դատեն՝ խրատեսցես եւ դարձուսցես ի չար ճանապարհէն՝ եւ ապրեցուսցես զանձն քո՝ եւ քո ոյժդ զօրեղապէս կացցէ հակառակ նոցին եւ խրոխտ լիցիս ի մարտնչել ընդ նոսա՝ մինչեւ դիցեն զպարանոցս իւրեանց ընդ լծոյ օրինացն Աստուծոյ»։

«Եթէ այսպէս կացցես ի պաշտաման քում յամենայնի՝ պահպանեսցէ զքեզ Աստուած եւ աճեցուսցէ զհօտ քո. եւ զգայն մնլորեալ՝ որ գիշատել հնարի զհոգիս արանց բարեաց՝ արտաքս վարեսցես ի փարախէն Քրիստոսի՝ զի մի ոք ըմբռնեսցի ի հօտէ քումմէ որչափ իցեն ի պանդխտութեան կենացս։ Դար-

ձեալ զգոյշ լեր, զի ոչ մի ինչ կարասցէ կործանել զքեզ ի հաստատութենէ յուսոյ եւ սիրոյ եւ երկիւղին Քրիստոսի, ոչ ամբարտաւանութիւն եւ ոչ այլ ինչ խորհուրդ չարութեան, ոչ ի հանգիստ քո բարձրամտել եւ ոչ ի փորձութեան քում նուաստանալ, այլ լիցիս միատարր հաւասարութեամբ իբրեւ զոտար յաշխարհէ, զի այսպէս կարող լիցիս առ ամենայն ինչ եւ կացցես մնասցես յամենայն կարգս ուղղութեան, եւ ծանիցիս ի մէջ մարդկան այր առանց արատոյ »։

« Սուրբ Երրորդութիւնն պահպանեսցէ զքեզ եւ զեղբայրութիւնդ քո եւ զողջախոհութիւն կենաց քոց ընդ հովանեաւ իւրով, զի գնասցես ի կատարումն վաստակոցդ զոր ընկալար ի մշակել զայգի Տեառն զօրութեանց, եւ արասցես զայդ արդարութեամբ · եւ յաւուր անանց փոխարինին կարող լիցիս լսել ի Տեառնէ մերմէ զոր ասէն · Աղնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մուտ յուրախութիւն Տեառն քո »։

Ապաքէն նախընթաց համառօտ նկարագրէն ըստ բաւականին պարզուելով եպիսկոպոսութեան աստիճանին վսեմութիւնը եւ ծանրութիւնը՝ ինչպէս նաեւ եպիսկոպոսաց նուիրական պարտքը՝ ըստ այսմ՝ « Ոչ՝ զաղ գոռա՝ զաղ ինդրեսցի, և ոչ՝ սակաւ՝ սակաւ ինդրեսցի »՝ հետեւաբար ինչպէս ամեն բարձր աստիճանի՝ նոյնպէս եպիսկոպոսութեան աստիճանի եւ իշխանութեան բարձրութեան համաձայն՝ զայն ստանձնող իւրաքանչիւր անձի կամ եկեղեցական պաշտօնէի ամենաչնչին պակասութիւնը եւ յանցանքը անգամ առաւել զգալի եւ ընդհանուրին ուշադրութեան արժանի լինելը բացատրելոյ հարկ չկայ։ Ուստի ստորին վիճակում գտնուած որ եւ իցէ անձի աչաց գերանը համեմատաբար այնքան նշանակութիւն չունենար՝ որքան մի բարձրաստիճան անձի աչաց շիւղը կունենայ՝ հետեւաբար Եկեղեցւոյ եւ օրինաց առջեւ ինչպէս իշխանութիւնը եւ պաշտօնը մեծ է՝ նոյնպէս առաւել խիստ եւ ծանր կլինի այնպիսւոյն պատասխանատուութիւնը եւ դատապարտութիւնը։ Եթէ այս այսպէս չլինի՝ Եկեղ. դասակարգութիւնը ոչ նշանակութիւն՝ ոչ կարեւորութիւն՝ ոչ պատիւ՝ եւ ոչ օգուտ կունենայ Եկեղեցւոյ մէջ՝ հետեւաբար երեւակայական մի գոյութեան վիճակակից կհամարուի։

Ցիրաւի իրական եւ արդիւնաւոր գոյութիւն ունենալոյ համար՝ եւ որպէս զի ամենայն ինչ փոխադարձ համերաշխութեամբ ապահովեալ եւ պաշտպանեալ լինի՝ հարկ է որ պաշտօնէից իրաւասութեան հետ համահաւասար եւ համազօր լինի պատասխանատուութիւնն եւս՝ ինչպէս որ այսպիսի փոխադարձ պարտք եւ իրաւունք ունին Եպիսկոպոսութիւնն եւ եպիսկոպոսական աստիճանը կրող ամեն անձինք։ Հետեւաբար պատասխանատուութիւն — պարտք եւ իրաւասութիւնն — կամ իրաւունքը համահաւասար եւ զուգընթաց են եւ պիտի լինին։

Պատասխանատուութեան ենթարկվիլ առանց իրաւասութիւն ունենալոյ՝ ոչ երբէք օրինաւոր եւ ներելի է, նոյնպէս իրաւասութիւն ունենալ առանց պատասխանատուութեան՝ ոչ մի տեղ եւ ոչ մի օրէնքով ներելի եւ տանելի է։ Այսպիսի պարտաւորութիւնը նուիրական է ամեն մարդու՝ մանաւանդ բարձրաստիճան պաշտօնէից համար։ Ստի հեշտ եւ պէտք է հակիրճ մի տեսութիւն ամփոփել եւ եզրակացնել, զի Եպիսկոպոսութիւնն կամ Եպիսկոպոսունք եւս ունենալով վսեմ եւ բարձր աստիճան՝ ինչպէս իշխանական իրաւունք եւ բարձրութիւնը ունին՝ կվայելեն՝ եւ պարտին գործադրել, նոյնպէս պիտի զգան եւ գործադրեն լծորդ պարտաւորութիւնքը կամ պատասխանատուութիւնքը, առանց որոց՝ Եկեղեցւոյ մէջ համերաշխութիւն եւ պէտք մի չեն կարող ունենալ եւ ոչ պիտի ունենան։

Եթէ Եպիսկոպոսական բարձր աստիճանին եւ պաշտօնին անհրաժեշտ դիրքէն եւ պարտաւորութիւններէն է՝ որ երբ Եպիսկոպոսի վերայ մի պակասութիւն նշմարուի՝ բաւական յանցանք կվերագրուի եւ գայթակղութիւն կպատճառէ, որքան աւելի զգալի եւ ծանր կլինի գայթակղութիւնն եւ մեղադրանքն՝ եթէ պակասութիւնն մեծ եւ ծանր լինի։ Ուստի անձնիւր Եպիսկոպոսն որքան պիտի ջանայ իւր աստիճանին եւ իշխանութեան պարտուց եւ իւրաւանց մէջ զգոյշ եւ խոհեմ շարժիլ, նոյնը աւելի պիտի պահանջուի եւ բազմապատկուի եթէ որ եւ իցէ սխալանաց մէջ գլորուած է եւ ժողովրդեան գայթակղութիւն եւ երկպառակութիւն եւլն պատճառած է։

Անշուշտ ամեն բարձրաստիճան անձանց՝ ինչպէս նաեւ Եպիսկոպոսաց վըսեմ եւ անհրաժեշտ պարտաւորութիւնն է միշտ լինել հեղ՝ խոնարհ՝ գթած ըստ սահմանելոյ Առաքելոյն, խնամակալ կարօտելոց, ուրանալով զանձն՝ իւր շահը եւ անձնասիրութիւնը երբէք չունենալ՝ միշտ Եկեղեցւոյ եւ ժողովրդեան օգուտը նախադասելով, ուր թողումք՝ որ Եպիսկոպոսունք կուսակրօն լինելով՝ աշխարհի համար աշխարհի մէջ մեռեալ կհամարուին, հետեւաբար անձնական շահ՝ պատուասիրութիւն՝ աշխարհային կիրք եւլն անուշանելոյ եւ պաշտպանելոյ երբէք պէտք եւ կարօտութիւն չունին եւ ոչ պիտի ունենան։ Զայս կպահանջէ Եպիսկոպոսութիւնն, որոյ բաղում օրինակները մեզ կաւանդէ Քրիստոսի Եկեղեցին սկսեալ յԱռաքելոց եւ ի սուրբ Հայրապետաց։

Ով որ լինի՝ թող լինի, Եպիսկոպոսական աստիճան ունենալով՝ աւելի պիտի ջանայ Եկեղեցւոյ մեծ Վարդապետի՝ Քրիստոսի խոնարհութեան՝ անձնանուիրութեան եւլն եւլն տիպարը պատկերացնել իւր վերայ, եւ ոչ երբէք կարող է արդարանալ եւ անձին իրաւունք համարել՝ Եպիսկոպոսական աստիճանը չարութեան՝ մոլութեանց եւ անձնական կրից վահան պատրուակելով եւ մի միայն անձնամոլութեամբ իւր պէտքը եւ շահը նկատել, եւլն եւլն։

Եկեղեցին՝ առանց խորելոյ նաեւ Եպիսկոպոսաց պատուոյ՝ աստիճանի եւ

իրաւանց համար կանոններ սահմանելով, պարտադանց եւ մեղապարտից համար եւս համեմատաբար խիստ պատիժներ տրամադրած է, որոց նկատմամբ մի հակիրճ գաղափար տալոյ համար՝ ստորեւ ի ծանօթութեան ծաղկաքաղ կամ փոփոխուին մի քանի կանոնք *), որոց վերայ անշուշտ խորին ուշադրութիւն կընծայեն բանասէրք։

(*) Ի Ե. — «Եպիսկոպոս և երէց, և սարկաւագ՝ հարկանող զհաւատացեալս մեղուցեալն, կամ զանհաւատս զկուռողն ի ձեռն այսոցիկ երկուցանել կամեցեալն՝ լուծանել հրամայեցաք։ քանզի ոչ ուրեք զայն Տէրն ուսոյց, բայց եթէ ընդդէմ սորին ինքն հարաւ, այլ ոչ զոք եհար, այլ և թշնամանեցաւ, և ոչ զոք փոխարէն թշնամանեաց, չարչարեցաւ և ոչ սպառնացաւ։

ԻԶ. — Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ լուծեալ իրաւաբար ի վերայ երևելի յանցանաց, և համարձակեսցի մերձենալ յաւանդեալն երբեմն նմա ի պաշտօն, սա ամենևին ի բաց հատեալ անկցի յեկեղեցւոյն։

ԻԸ. — Եթէ ոք Եպիսկոպոս աշխարհական իշխանօք վարեցեալ, և նոքօք բուռն ի վերայ եկեղեցւոյն եղիցի, լուծցի և որոշեսցի, և ամենեքեան որք հաղորդին ընդ նմա։

ԼԳ. — Եպիսկոպոս ոք մի՝ իշխեսցէ արտաքոյ իւրոց սահմանացն ձեռնադրութիւնս առնել, որք ոչ ընդ ձեռամբ նորա են քաղաքք, կամ գաւառք։ ապա եթէ յանդիմանեսցի զայս արարեալ առանց կամաց այնոցիկ, որք ունին զքաղաքն կամ զտեղին՝ լուծցին, ինքն, և որ ձեռնադրեցաւն։

Խ. — Եպիսկոպոս կամ երէց, կամ սարկաւագ ոք՝ որ եթէ ի ցէ պարապեալ կամ զինարբուացն, և կամ այլոյ անկարգութեան, կամ դադարեցուսցին, և կամ լուծցին։

ԾԳ. — Եպիսկոպոս կամ երէց, անիրաւ առնելով զքահանայութիւն, կամ զժողովրդոցն՝ ոչ

Արդ երբ Եպիսկոպոսաց համար եւս առանց խտրութեան եւ աչառութեան եկեղեցական կանոնք ճշտիւ պահպանուին, (ինչպէս որ պէտք է պահպանուին, որպէս զի զեղծմունք չյաճախեն, եւ զեղծմունքն միշտ կանոնաց դէմ գործելով յաճախելէն կամ անտարբեր մնալէն կծնանին,) Եպիսկոպոսութիւնը իւր օրինաւոր սահմանին մէջ կյարատեւէ՝ եւ Եպիսկոպոսունք ինչպէս նաեւ քահանայք եւ այլք պախարակելի վատթար մոլութեանց հետեւել երբէք չեն յանդգնիր. սակայն երբ կանոնք զանցառութեան կրտրուին, թէ եկեղեցւոյն եւ թէ պաշտօնէութեան ամենուրեք մեծ նախատինք՝ ժողովրդեան գայթակղութիւն եւ հոգեկան կորուստ պատճառելէ ուրիշ օգուտ երբէք արտադրել չեն կարող։ Ուստի՝ երբ հնարաւոր՝ օրինական՝ մեզմ միջոցները՝ խրատները եւ կարեկից աղաչանքով զնոսա ի բարեպաշտութիւն, որոշեսցի. ապա եթէ յամառեսցէ չածիլ յուղղութիւն՝ լուծցի։»

Դեռ շատ կանոններ կան, որք աւելի վիճակ և ընդ իշխանութեամբ իւրեանց Եպիսկոպոսներ ունեցող Եպիսկոպոսաց կվերաբերին, և առաջին դարերում՝ այժմ Պատրիարք անունը . . . կրողները Մեծ Եպիսկոպոս կամ Արք Եպիսկոպոս անուամբ կը յիշուէին, որոց իշխանութեան ներքև ինչպէս Եպիսկոպոսներ՝ նոյնպէս քորեպիսկոպոսներ ևն կը գտնուէին, և կանոնաց շատերը նոցա համար և յարմար են։

Ներսէս Շնորհալոյ ընդհանրականը ևս՝ ի թիւս այլոց՝ ըստ բաւականին կպարզէ Եպիսկոպոսաց և Եպիսկոպոսութեան իշխանութիւնը և պարտաւորութիւնքը։

բարութիւնքը կսպառին, ընդհանուրի կամ թէ Եկեղեցւոյ շահուց եւ պայծառութեան համար՝ առանց խնայելոյ պէտք է անզիջէ եւ անապաշաւ մասնաւորները ով որ լինի՝ թէ Եպիսկոպոս եւ թէ ստորին պաշտօնեայ՝ դատապարտել պատժելով կամ Եկեղեցիէն արտաքսելով գործած մեղայն համաձայն, որպէս զի չարեաց պատժուելով եւ պակասելով՝ բարիները եւ արժանաւորները յաջողգեն եւ բազմանան ի շինութիւն եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ ի պարծանս Եկեղեցական Վարչութեան։

Վ. Ե. Մ.

ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՒԹԻՒՆ.

(Շարայարութիւն)

Է.

Նոյն տարին Մովսէս կաթուղիկոսին աշակերտ՝ Կեսարացի Խաչատուր վարդապետը Նուիրակութեան պաշտօնով յուղարկուած էր Ասորեստան, Յունաստան եւ ուրիշ արեւմտեան երկիրները։ «Եւ էր Խաչատուր Վարդապետն այր «հեզ եւ հանդարտ եւ քաղցրաբարոյ, «ոչ անիմաստ եւ անբանիբուն, որ լոկ «տեսութեամբ միայն շահէր զառ ինքն «պատահեալսն», բայց գործերէն կերեւի որ կամ խոհեմութիւնը կատարեալ չէր, եւ կամ Նիկոլին չարութիւններն այնքան շատ էին՝ որ Նուիրակին ոչ խոհեմութիւնը կյաղթէր նոցա, եւ ոչ հեզութիւնն ու խաղաղասիրութիւնը։

Վասն զի սա Իլովլ հասնելէն յետոյ թէպէտ տեղն ի տեղը լսեց հասկացաւ ժողովրդէն Նիկոլի անկարգութիւնները, որոց համար արդէն խօսած էին իրեն Կաթուղիկոսն ու Գրիգոր վարդապետը, բայց միշտ քաղցրութեամբ եւ առանձին կխրատէր զՆիկոլ, յուսալով որ շտկէ նա ինքզինքը եւ շահի ժողովրդեան սիրտն ու իւր անձին պատիւը։ Սակայն Նիկոլ «Ոչ ի վարդապետէն «ամաչէր, կասէ Առաքել, եւ ոչ ի ժո«ղովրդոյ ամբաստանութենէն երկրն«չէր, այլ իբրեւ զանշարժ լեառն ար«ձանացեալ կայր ի կամս իւր»։

Կիրակի օր մի ժամերգութեան միջոցին հրամայեց Նիկոլ իւր աբեղային որ աւետարանը կարդայ։ Խաչատուր վարդապետը՝ յայտնի չէ թէ ինչ մտքով կամ ինչ պատճառով՝ դարձաւ ասաց թէ թողնա չկարդայ, այլ ուրիշը։ Բայց Նիկոլ իւր կամքը կատարեց, աւետարանը իւր աբեղային կարդալ տուաւ։ Վարդապետը, որ արդէն լցուած էր Նիկոլի դէմ, տեսնելով որ բոլոր քահանայից ու ժողովրդոց առջեւ իւր խօսքը գետին ընկաւ, սաստիկ առնուեցաւ։ Դարձաւ դէպ ի ժողովուրդն ու ասաց։ «Անիծեալ լինի այն մարդն որ «սորա յետեւէն ծունր դնէ»։ Ատի

եւս կերեւի թէ որքան յաճախեալ էր այն ժամանակներն անէծք՝ բանադրանք՝ նզովք ընելու ղգուշալի սովորութիւնը նաեւ մեր եկեղեցականաց մէջ, որ Խաչատուր վարդապետին պէս հեզահոգի նուիրակն անգամ այնպիսի թեթեւ պատճառով ամբողջ ժողովրդեան խիղճը պղտորէ եւ եկեղեցւոյ մէջ խռովութիւն ձգէ։

Խաչատուր վարդապետը այն անէծքը տալն ու եկեղեցիէն դուրս ելնելը՝ շտակ իւր խուցն երթալը մէկ կանէ։ Խակոյն բոլոր ժողովուրդն եւս կ'ձգէ կելնէ դուրս, եւ կմնան միայն Նիկոլ եւ ուրիշ քանի մի հոգի։ Երբ ժամը կվերջանայ ու նոքա եւս կելնեն դուրս՝ կուգան Իլվովի Հայոց դատաւորներն ու իշխանները, կփակեն եկեղեցւոյն դռներն ու բանալին կառնուն կպահեն, եւ այնպէս քանի մի օր փակ կմնայ եկեղեցին։

Իշխանները կմտածեն որ այս անկարգութեանց վերջ տալու է օրինաւոր կերպով։ Խորհուրդ կուտան Խաչատուր Վարդապետին որ իբրեւ նուիրակ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ դատաստան բանայ Նիկոլի վերայ, եւ քննութեան տակ ձգէ նորա ամեն գործերն ու յանցանքները։ Նիկոլ այն խորհուրդը իմանալուն պէս՝ իւր մօտ կկանչէ երկու Լեհացի վկաներ, — որ ըստ Իլվովի սովորութեան՝ Հայոց ամեն դատաստան կտրելուն ներկայ պիտի գտնուէին իբրեւ Լեհաց տէրութեանը կողմանէ, — եւ խօսք կդնէ նոցա հետ որ գան պահպանեն դատարանին մէկ կողմը, կամ թէ վերի յարկը, — որովհետեւ դատարանը եպիսկոպոսարանին ներքեւն էր, — եւ ինքը ձայն տալուն պէս՝ դուրս ելնեն։ Դատաստանին օրը Խաչատուր վարդապետը կերթայ կնստի ատեանը, իշխաններն ու դատաւորներն իւրեանց տեղերը կնստին ու Նիկոլը ներս կկանչեն։ Կմտնէ Նիկոլ, կնայի որ առաջին տեղը վարդապետը նստել է, կհրամայէ սպասաւորներուն որ իւր աթոռը սովորական տեղը դնեն՝ ուրիշներէն վեր։ Կասեն իշխաններն թէ «Ի՞նչ է արա-«ծը, դուն դատուելու համար կան-«չուած ես, ի՞նչպէս կարող ես նստիլ։ «այդտեղ ոտքի վերայ պիտի կենաս»։ — «Դատուելո՞ւ, կասէ Նիկոլը։ Հապա ո՞վ «է զիս դատողը։» — «Ահա այս նոր եկած «նուիրակը, եւ այս դատաւորները։ «մի թէ չե՞ս տեսներ»։ Այն ատեն բարձրը ձայնով կկանչէ Նիկոլ Լեհացի վկաներուն «Դուրս ելէք»։ եւ նոքա խակոյն կելնեն իւրեանց պահուրտած տեղէն, կուգան ներս։ «Աստուծոյ սիրոյն «համար, կասէ Նիկոլ, դուք ձեր աչ-«քովը տեսէք ու վկայ եղէք ինձ, որ «ես եպիսկոպոս, եւ սոքա աշխարհա-«կան, ժողովուել են որ զիս դատաս-«տանի տակ ձգեն։ Այդ վարդապետն «որ թիւրքաց երկրէն է, լրտեսութիւն «անելու համար եկել է մեր երկիրը։ «այժմ սոցա հետ ի միասին նստել է «որ իմ դատաստանս կտրէ. վկա՞յ էք»։ Մարդիկը պատասխան կուտան թէ «Մեք ինչ որ մեր աչքովը տեսանք՝ վը-«կայելու միշտ պատրաստ եմք»։ Այնտեղ ժողովուած բոլոր Հայերը, քահանայք, իշխանք եւ դատաւորք, կապշին կմնան, եւ Ֆռանկաց երկիւղէն սարսա-

փած՝ իրարու ետեւէ կելնեն կվախ-
չին, վարդապետն եւս իւր խուցը կը
քաշուի։

Այն յաղթութեամբ սիրտ առած՝
կրսկսի այնուհետեւ Նիկոլ կեղծաւորու-
թիւնը ձեռք առնուլ նորէն. միջնորդ-
ներ կբռնէ, մարդիկ կյուղարկէ վար-
դապետին, քահանաներուն եւ իշխան-
ներուն որ գան հաշտուին իւր հետ.
«Այսքան հակառակութիւնը բաւական
«է, կասէ, եկէք բացէք եկեղեցւոյ
«դուռը, մինչեւ երբ փակ պիտի մնա»։
Իլմոլցիք լաւ գիտնալով նորա խարդախ
ու նենգաւոր բնաւորութիւնը՝ չհաւա-
տային խօսքերուն, ամենեւին մտիկ չա-
րին. իսկ վարդապետը կտեսնէր որ այդ
խռովութիւնն ու կռիւները քանի կեր-
թան՝ զայրանալու են. ուստի խօսեցաւ
քահանաներուն ու իշխաններուն որ
եպիսկոպոսին հետ հաշտուելու մէկ
ճարը նային. «Իմ երկիւղս այն է՝ կա-
«սէր վարդապետը, որ այդ եպիսկոպոսը
«կարող է մեծամեծ վնասներ հասցնել
«մեզ տերութեան ձեռքովը՝ եթէ մին-
«չեւ վերջը մեր յամառութեանը մէջ
«մնամք»։ Իլմոլցիք պատասխան տուին
թէ «Ամենեւին մի վախնար՝ վարդա-
«պետ, վասն զի մեք քանի՞ քանի՞ հրո-
«վարտակներ ունիմք Լեհաց հին թա-
«գաւորներէն՝ որ ինչ եւ իցէ դատաս-
«տան որ պատահի մեր ազգին մէջ, մեր
«Հայոց դատաւորները պիտի կարեն,
«ոչ թէ Լեհաց դատաւորները՝ այն թո-
«ղումք. եթէ նոքա ապրանք ունին,
«մեք եւս ունիմք. եթէ նոքա խելք ու-
«նին, փառք Աստուծոյ մենք եւս ու-
«նիմք. ուրեմն քու երիւղդ ինչէ՞ն
«է»*)։ Այսու ամենայնիւ վարդապե-
տին սիրտը չհանգչեցաւ. երբեմն շատը
ի միասին եւ երբեմն առանձին առան-
ձին կխրատէր կյորդորէր որ հաշտուին
եպիսկոպոսին հետ, բայց ճար չեղաւ,
ամենեւին կամք չտուին։ Այն ատեն
վարդապետը ձեռքը իւր փողոցատին
տանելով ու օձիքը թոթվելով ասաց
բաղմութեան առջեւ՝ թէ «Ես անպարտ
«եմ այդ բանէդ առաջ գալու չարեաց
«մեղադրանքէն, ինչ գիտէք արէք»։

Ը.

Մինչեւ այն ժամանակ որչափ ան-
պատշաճ եւ գայթակղական բաներ որ
եղան՝ գոնէ ազգին ու ժողովրդեան մէջ
էին. ուստի եւ ի նոցանէ առաջ եկած
ու գալիք վնասներուն դարման անելը
անկարելի բան չէր։ Երկու առաջնորդ,
թէպէտեւ մէկը դատաւոր եւ միւսը
դատաստանի տակ՝ դիմացէ դիմաց ե-
կել էին. երկուքն եւս՝ որը շատ՝ որը
սակաւ՝ իւրեանց հետ ժողովրդեան
մէջ կուսակիցներ ունէին. ոչ ապաքէն
յայտնի է թէ այն երկու կողմին որն
եւս յաղթող գտնուէր՝ խռովութիւնն
ու թշնամութիւնները շուտով պիտի
չդադրէին. պէտք չէր որ երկու կող-
մէն խաղաղարար մարդիկ մէջ մտնէին
ու հաշտացնէին երկպառակեալները,
եւ խաչատուր վարդապետը մինակ եւ
անօգնական չմնար իւր խոհական ջան-

(*) «Այլ և ունիմք զապրանս ընդ ապրա-
«նաց նոցա, և զխելս ընդ խելաց նոցա, և դու
«զի՞ ևս երկնչիս»։ Առաք. Ի.

քին մէջ։ Ոչ. մեր ազգին մեծամեծ դըժ-
բաղդութեանց մէկն այս եղած է ամէն
ժամանակ՝ որ քահանայ քահանայի,
աշխարհական աշխարհականի, ժողո-
վուրդ ժողովրդի դէմ կռուրտած որ
տեսնեն, ի հարկէ այս երկուքին մէկը
պիտի յաղթէ ու միւսը պիտի յաղթուի,
ու պէտք է որ այնպէս լինի ասելով,
կամ անտարբեր կը կենան եւ կամ ին-
քեանք եւս կռիւը կսաստկացնեն։ Ա-
սով է ահա որ ազգին վնասը եւ օտա-
րաց առջեւ նախատինքը շատ անգամ
միմիայն պտուղ կլինի այնպիսի հակա-
ռակութեանց եւ յաղթութեանց. յաղ-
թուողը ատելութեամբ ու թշնամու-
թեամբ կմնայ անդադար, ծածուկ հը-
նարքներով վրէժխնդրութեան ետեւէ
կընկնի, եւ յաղթողն բարձր ի գլուխ
պանծալով իւր հակառակորդին դէմ՝
յաղթութեանը յարգը կկորսընէ։ Երկու
կողմի կուսակցութիւններն եւս կնստին
ողբ ու լաց կանեն որ մեր ազգը ան-
միաբան է, եւ միաբանութիւն անելու
աշխատանքը ոչ ոք յանձն չառնուր,
եւ ոչ իսկ եկեղեցականը, որոյ պարտքն
է ոչ միայն Խաղաղ-ին տալ ամենայն-ն
սուրբ սեղանոյն առջեւը, այլ եւ տուա-
ծին պտուղը ժողովրդէն պահանջել։

Նիկոլի կուսակիցներն մինչեւ այն
ժամանակ Իլվովցոց մէջէն նոքա էին՝ որ
եւրոպական բարակութիւնները՝ հան-
դերձ սակաւ ազգասիրութեամբ՝ աւելի
վեր կդնէին քան թէ ազգային հոգւոյն
անկորուստ պահպանութիւնը հանդերձ
քանի մի կարծեցեալ կոպտութիւննե-
րով։ Նոքա Նիկոլին չարամտութիւնը
չունէին, վասն զի նորա փառամոլ եւ
ազգատեաց կիրքերէն եւս աղատ էին.
բայց ի՞նչ օգուտ, միթէ նորա կիրքե-
րուն զօրաւոր գործիք եւ պաշտպան
լինելը բաւական պակասութիւն չէ՞։

Երբ թշնամութիւնը սաստկացաւ, ու
տանուտէրները եկեղեցին չկամեցան
բանալ, Նիկոլ ելաւ գնաց Էջ-էրնէրդ-ն՝
որ այն ժամանակները շատ զօրացած
էին ամէն տեղ, եւ խօսք տուաւ նոցա
որ ինքն եւ իւր ժողովուրդը ելնեն Հա-
յոց Կաթուղիկոսին հնազանդութենէն
ու Հռովմայ պապին իշխանութեանը
տակ մտնեն, եւ ձեռագիր տուաւ նոցա
անդ-ծանելի, ինչպէս որ կասէ Առաքել
պատմիչը, թէ «Ես Նիկոլայոս եպիսկո-
«պոս Հայոց՝ իմովս կամաւ միաբանեցայ
«ընդ եկեղեցւոյն Հռովմայ, եւ մտի ի հը-
«նազանդութիւն փափին ամենիւք հե-
«տեւելովքն իմովք՝ կատարել զամե-
«նայն հրամանս որք առ ի նմանէ»։
Պղտոր ջրի մէջ ձուկ որսալը ամեն ժա-
մանակ եղուիթներու մեծ վարպետու-
թիւնն եղած է. ուստի եւ ոչ քննել
կամեցան նոքա թէ Նիկոլին այս կեր-
պով իւր ազգն ու եկեղեցին մատնելը
ի՞նչ պատճառէ առաջ եկած է։ Իւր-
եանց առջեւ մէկ բան միայն կար. ամ-
բողջ ժողովուրդ մի պապին հպատա-
կեցընելով՝ Հռովմայ եկեղեցւոյն նոր
ծառայութիւն մի անել. այն նպատա-
կին հասնելու համար՝ որ եւ իցէ միջոց
լաւ ու գովելի կերեւնար աչքերուն։
Առին Նիկոլը մեծ ուրախութեամբ տա-
րին Իլվովի արքեպիսկոպոսին, եւ ամէն
բան հասկացուցին անոր։ Արքեպիսկո-
պոսը տեսաւ որ Նիկոլին առաջարկու-
թիւնը իւր մտքին եւս յարմար է, բայց

պատճառներն ու հետեւանքները աչքը վախեցուցին. հասկացաւ որ այն Լուսաւորչական Հայերուն կաթոլիկ կամ պապական լինելը՝ ի մոլորութենէ ի ճշմարտութիւն դառնամք ասելու մրաքով չէ, այլ իւրեանց ազգակցացը դէմ զօրանալու համար է. ուստի քաղաքական կռիւ տեսնելով բանին մէջ՝ քաղաքապետին յուղարկեց։ Քաղաքապետը իմաց տուաւ Հայոց իշխաններուն որ կամ եկեղեցին բանան, եւ կամ դատաստանի գան. բայց իշխանները մտիկ չարին, վասն զի պարտական չէին մտիկ անելու նորա։ Գործը մնաց եղուիթներուն եւ ուրիշ լեհացի կրօնաւորաց, որք թէպէտ միշտ հակառակ էին իրարու, բայց այն անիրաւութիւնը գործելու համար սիրով միաբանեցան։ Սոքա իւրեանց հետ առին դպրատան տղայոց բազմութիւն մի, — վասն զի չափահաս ու խելացի մարդիկ չէին մնաներ այնպիսի անիրաւ եւ անպատշաճ գործի մէջ, — գնացին քաղաքապետին, եւ քանի մի զինուոր առած հասան Հայոց եկեղեցւոյն դուռը։ Մարդ յուղարկեցին Հայոց տանուտէրերուն որ կամ գան եկեղեցին բանան, եւ կամ բանալիներն տան։ Նոքա պատասխան յուղարկեցին թէ «Այդ եկեղեցին մերն է, եւ մեր «փողովը շինել եմք՝ թագաւորական «հրամանաւ, մէջի եղած սպասներն ու «անօթներն եւս մերն են։ Իսկ այդ Նի«կոլն որ դուք եպիսկոպոս կհամարիք՝ «մեր առաջնորդը չէ, նզովքի տակ է։ «Դուք ով էք եւ ի՞նչ իրաւամբ կպա«հանջէք մեզնէ մեր եկեղեցին կամ ա«նոր բանալիքը»։

Եղուիթները ծիծաղեցան Հայոց բարեմտութեանը վերայ. «Խեղճ մարդիկ՝ «կասէին՝ չեն գիտեր որ մեք ոչ միայն «այս եկեղեցւոյն՝ այլ եւ ամենայն եկե«ղեցեաց տէր եմք. մեր առջեւ փակ «դուռ չկայ՝ եւ պէտք չէ որ լինի. մեք «զձեզ բռնութեամբ կաթոլիկ պիտի ա«նեմք որ ձեր դաւակաց եւ թոռներուն «կաթոլիկութիւնը կամաւոր եւ ապա«հով լինի։ Նիկոլ թէ վատ մարդ է՝ ա«նիրաւ մարդ է՝ մեր ի՞նչ փոյթն է. «բաւական է որ մեր գիտաւորութեան «լաւ կծառայէ՝ քան զինքը լաւ մարդ «չկայ։ Եկեղեցւոյն տէր մեք եպիսկո«պոսը կճանաչեմք. եպիսկոպոսը զիւր «եկեղեցին ու ժողովուրդը մեզ ծախեց «կամ ընծայեց՝ իբրեւ փոխանորդաց «եւ պաշտօնէից պապին. ով կարող է «այս բանիս արգելք լինել առանց հե«րետիկոսութեան մէջ ընկնելու։ Եկե«ղեցին կաթոլիկ է՝ հերձուածողները «բանալիները չեն տար. կը կոտրեմք «դռները՝ կը տիրեմք մեր ստացուած«քին»։ Այս ասին ու հրամայեցին որ դռները կոտրուին. մտան ներս՝ յանձնեցին եկեղեցին Նիկոլի՝ մէջի ամեն սպասներովը. յետոյ մարդ յուղարկեցին քաղաքին ամէն կողմերն որ Նիկոլի գլխաւոր հակառակորդներէն զով որ գտնեն՝ թէ՛ քահանայ եւ թէ՛ աշխարհական բռնեն բանտ դնեն ու տուգանքի տակ ձգեն իբրեւ ապստամբ եւ խռովարար մարդիկ։

Ինչպէս լաւ կներկայացներ Նիկոլ այն կաթոլիկութիւնը՝ որ մեր ազգին մէջ ինչ եւ իցէ ժամանակ եւ որ եւ իցէ տեղ մտել է եղուիթներու եւ նոցա

հետեւող անխիղճ ու կրօնամոլ մարդկանց ձեռքով։ Խնդրեմ Անեցիք, երբ Ալփասլանի ու Զարմաղանի բռնութիւններէն փախչելով խաչապաշտ քրիստոնէից երկիր կերթամք ասիք ու եկաք Լեհաստանի գեղերն ու քաղաքները շէնցուցիք, արդեօք կանցնէր ձեր մըտքէն թէ օր պիտի գայ որ ձեր թոռները՝ ձեր ու նոցա շինած ու զարդարած եկեղեցիէն դուրս վռնտուին, Լուսաւորչական լինելով՝ հերձուածող հերետիկոս ասուին, ձեր սիրած ու խօսած լեզուն բոլորովին մոռանան, եւ Հայ ասուելէն անգամ ամաչեն։ . . .

Այնուհետեւ զօրացաւ Նիկոլ եղուիթներուն պաշտպանութեամբը, եւ տիրապետեց եկեղեցւոյն ոսկեղէն եւ արծաթեղէն սպասներուն, վառաւոր ոսկեհուռն զգեստներուն, սրբոց արծաթապատ եւ ոսկիապատ մասունքներուն, հազար կտորէն աւելի հին ձեռագիրներուն, մեր թագաւորաց ժամանակներէն մնացած ցանկալի յիշատակներուն՝ որ Հայաստանէն այն տեղ բերուած էին, եւս եւ եկեղեցւոյ մէջ պահուած աւանդներուն*)։

Գրաւեց նաեւ Հայոց միւս եկեղեցիներն ու վանքերը, եւ ժողովուրդը առանց եկեղեցւոյ մնաց։ Մեր ազգին ժամասէր ու եկեղեցասէր բնաւորութիւնը գիտցողները միայն կարող են հասկանալ՝ թէ ինչ աստիճանի ցաւ, գանգատ, գայթակղութիւն, ողբ եւ սուգ տիրած պիտի լինի Հայոց մէջ՝ երբ այսպէս առանց եկեղեցւոյ մնացին անհովիւ ու անփարախ ոչխարներու նման։

Եկեղեցական ինչ տներ, կալուածներ, հողեր, խանութներ որ կային, ամենուն վերայ ձեռք դրաւ, ասելով թէ «Ես ե-«պիսկոպոս եմ», ուստի եկեղեցինե-«րըն ու նոցա մէջ եղած աւանդները, «ստացուածքները իմն են»։ Եպիսկոպոսական աստիճանին ուրիշ ամէն պարագաներուն հետ այս ճշմարտութիւնն եւս ոտքի տակ առել էր յանդուգն բռնակալը՝ թէ Եպիսկոպոսը Վերակացու եւ Խնամակալ միայն պիտի լինի եկեղեցեաց եւ եկեղեցական բաներու, եւ ոչ թէ պէր եւ Ճաճանգ, որովհետեւ ժողովուրդն է նոցա շինողը, պահպանողն ու զարդարողը։

Թող չասէ ոք թէ ի՞նչ հարկ կար այդպիսի ցաւալի անցքերը, անցած գընացած հին պատմութիւնները նորէն մէջ բերել։ Թող յիշէ այնպիսին որ հին պատմութիւնները նոր մարդկանց համար մեզ համար գրուած են, որպէս

(*) Առաքել պատմիչը տեղով կգրէ. «Ի մէջ «եկեղեցւոյն կայր գանձատուն, և ի նմա գիրք «և անօթք յոյժ բազումք. գրեանք աւելի քան «զհազար փերթ (այս ինքն հատոր կամ կտոր), «ամենեքեան ընտիրք և պատուականք. յորս «էին ոսկետուփ աստուածաշունչք և աւետա-«րանք, և շարակնոցք և այլ գրեանք բազումք։ «Այնպէս և անօթք, սկիհք և խաչք, քշոցք «և բուրվառք, կանթեղք և աշտանակք, շուր-«ջառք և եմիփորոնք, թագք և վակասք, սուրբ «նշանք և սրբոց նշխարք, և ի հարց և ի հաւուց «ի վաղեմի և ի նախկին թագաւորաց ունէին «մուրհակք և նոմոքք, և այլ ևս ինչ յոյժ բա-«զում։ Սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն «էին ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ «իւրով իշխանութեամբն Նիկոլն»։

զի մեք խելք սովրիմք, լաւին հետեւիմք ու վատէն զգուշանամք. ինչպէս որ մեք եւս մեր ժամանակի պատմութիւնները մեր յաջորդներուն համար կգրեմք։ Եթէ Լեհաստանի Հայոց կաթոլիկ լինելուն պատմութիւնը տեղն ի տեղ գիտնային մերազնեայք, շատ հաւանական է որ երեսունը հինգ տարուընէ ի վեր Պոլսոյ Հայոց մէջ պատահած խռովութիւնները չէին պատահեր։ Բայց մեք պատմութիւնը առաջ տանիմք, հին եւ նոր անցքերն իրարու հետ բաղդատելու հոգը ազգասէր ընթերցողաց կթողումք։

(Շարայարելիոն յառաջիկայ.)

Գ. Ա. Ա.

ԵՐԳ ՏԻՐԱՄՕՐՆ
Ի ԾՆՈՒՆԴՆ ՅԻՍՈՒՍԻ

Է՛ջ, զուարթուն, ի թեւ անմահ,
Օն աւետիս տար ընդ աշխարհ,
Ի Բէթղեհէմ Մարիամ երկնեալ
Գաբրիէլէ ինձ զաւետեալ
Ծնայ զորդի զՕծեալ Դաւթի
Յիսուս փրկիչ մեր աշխարհի,
Բարձող մեղաց մօրն Եւայի։
Նինջ իմ մանկիկ զառն Աստուծոյ,
Այդ՝ մուտ յայրիս ծագեալդ լուսոյ,
Սէր սուրբ Հոգւոյն, ծաղիկ սրտիս,
Պտուղ ինամսեան, ծնունդ ծոցոյս,
Նինջ լուսածին ի գիրկս կուսիս,
Բեզ շատ օր օր, քաղցրիկ որդիս,
Անոյշ անոյշ քեզ շիթք կաթիս։
Մայր եմ ես քո կոյս սուրբ ուխտեալ,
Հոգւոյն սրբոյ միայն հարսնացեալ,
Երկինք է իմ սուրբ սրսկապան
Եւ հայրենիք եւ օթեւան.
Անդ է եւ քո հայր իմ փեսայն,
Բեզ շատ օր օր, քաղցրիկ որդիս.
Անոյշ անոյշ քեզ շիթք կաթիս։
Աղքատ եմ ես ի խնամս հիւսան,
Այր է, որդեակ, մեր իջեւան,
Զիք ազգական ինձ օգնական,
Զիք խանձարուր քեզ պատսպարան.
Մսուր վիճակի քեզ յորօրան,
Ո՛հ Յիսուս Փրկիչ մեր աշխարհի,
Բարձող մեղաց մօրն Եւայի։
Աւա՛ղ տնանկ մօր ծննդեան,
Մի երանել եւս զՄարիամ,
Ընդ անկողնոյ որդեակ, փոխան
Եղար անճար յարդ անպիտան,
Ջեռիր ի շունչ եզին անբան։
Ո՛հ Յիսուս Փրկիչ մեր աշխարհի,
Բարձող մեղաց մօրն Եւայի։
Հովիւք ուստի է ձեր զայուստ,
Ո՞յր այցելու զայք ի հեռուստ,
Տուք աշխարհի ի զուարթնոց ձայն
Զողջոյն սիրոյ խաղաղութեան,
Զաւետի՛ս իմ Գաւրն ծննդեան
Յիսուս Փրկչին մեր աշխարհի
Բարձող մեղաց մօրն Եւայի։
Խնդա ցնծա կոյս Մարիամ,
Տես զաստղ Տեառն նորանշան.
Հնդիկ Արաբ եւ պարսկական
Ցարեւելից գայ կարաւան
Երկրպագել քո սուրբ Մանկան
Յիսուս Փրկչին մեր աշխարհի
Բարձող մեղաց մօրն Եւայի։
Բացէք զգանձս ձեր, Բաղդասար,
Թագաւորք սուրբ Մելքոն, Գասպար,
Մատուցէք զառն եւ զուարակ,
Կնդրուկ զմուռս ի պատարագ,
Նշան արեան եւ սուրբ զոհի
Յիսուս Փրկչին մեր աշխարհի
Բարձող մեղաց մօրն Եւայի։

ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶԱՏԵԱՆՑ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ։

— Գ. ՑԻՇԱՏԱԿԱԳՐԱՆՑ ՀԱՆԱԾ։ —

1842 ԹԻՒ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ,

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ,

(Շ-ԲՈ-ՆԱ-ԲԻ-Ն.)

Մեծ հանդէսով, առաջ — փառաջ մտայ Նախիջևան։ Պեալբալի խանը, իւր ամենայն երևելեաքը դուրս էր եկած ինձ ընդ յառաջ։ Հարիւրաւոր ոչխարներ մատաղ մորթուեցան ճանապարհների վերայ՝ ուստի անց էի կենում։ Դափ, թմբուկ, զուռնայ փչելով առաջիս, ես ևս ուռած փքուած ձիոյ վերայ նստած հետևում էի նոցա։ Տեղւոյս խանը ևս չհամարձակվեցաւ չհետևիլ Խոյի խանին. — ուրեմն, Սարդարի պարգևները, երկու հարիւր ընտիր ձիաւորք, հնազանդութեան ձրի հետը պատրաստեցի, ճանապարհ ձըգեցի Թարվէզ, և իններորդ օրը ինչ պատուով մտած էի Նախիջևան՝ նոյն պատուովը դուրս եկի և ճանապարհս շարունակեցի դէպ յԵրևան։

Հենց հասայ Շարուր, ուր մին գետ կար, որ Երևանու և Նախիջևանու սահմանն էր, Սալիմ աղայ Ամամատ խանի մօտիկ ազգականը, հիւրընկալութեան պաշտօնիւ, քանի մի հարիւր ձիաւորով, սպասում էր ինձ էն տեղ։ Մինչև Երևան քանի մի Հայոց գիւղեր անցկացանք։ Էն խղճահարութիւնը և աներևոյթ սէրը, որ մինչև Հայերին չէի տեսած, ինչպէս պատմեցի, զգում էի յառաջ, մինչև ցայսօր ևս ինձ զարմանք էր գալիս, թէ ինչի՞ այնուհետև երբ տեսայ Հայերին էն խղճութեան մէջը, էլ չէի զգում, որպէս թէ սատանէն յամառացրել էր կամքս։ Երևան Ամամատ խանը և ևս աւելի և ջերմեռանդ հիւրընկալութեամբ ընդունեց ինձ։ իւր պալատումը, որ բերթի մէջն է։ Ղրբօրորդիքը և իւր մօտիկ ազգականներն էին ինձ սպասաւորում։

Վրաստանու Հերակլ խանը, Նաղր Շահի հետ քանի մի հարիւր ձիաւորով գնալոյ համար Հնդկաստան և երկար հաւատարիմ ծառայութեանց փոխարէնը՝ ստացած էր Նաղր շահէն Երևանու հարկի մին մասն իւրեան և իւրայնոց թոշակ։ Նաղրից յետոյ էս երկար խառնակութեանց աղաղաւ, Երևանու Ամամատ խանը նայելով իւրեան դրացի խաներին, որք ինքնագլուխ էին և ոչ ոքի հարկ չէին տալիս, ինքն ևս ցանկացել էր նմանիլ նոցա, վասն որոյ և զլացել էր նշանակեալ գումարը տալ Հերակլին։ Հերակլն ևս իւր իրաւունքը չկորցնելոյ համար, քանի մի անգամ Վրացի և Լէկզի զօրքով եկած էր ու պաշարած Երևանը, ու ստացել փոքր ի շատէ կամ բոլոր գումարը ու վերադարձել էր։ Ի հարկէ և Ամամատ խանը որքան կհատուցանէր Հերակլին, մինին երկու կառնէր Հայերից, թէ անհաւատների փողն՝ անհաւատին թող հասնի։ Շատ անգամ Ամամատ խանը հրաւիրել էր դրացի խաներին գալ օգնել ինքեան ընդդէմ անհաւատին, այս ինքն Հերակլն, բայց նոցա զլուխը ևս խառն լինելով,

չէին կարողացել կատարել նրա խնդիրքը։ Մամատ խանը ոչ թէ միայն հարկ հաւուցանելոյ համար Հերակլին փոքր պատճառի էր սպասում զլուխ վերցնել Վրացւոյն ընդդէմ, այլև համեմատ մահմետական կրօնից՝ լաւ էս էր իւր հաւատակցիցը կախումն ունենայ քան թէ այլակրօնիցը, հրամայած էր ինձ Սարդարին, որ աշխատիմ հաւատացնել Մամատ խանին, կտրելոց է նորա կախումն Վրացուն՝ եթէ հնազանդութեան պայմանները կատարէ, և եթէ վախենում լինի Մամատ խանը Հերակլեցը, զրեմ զօրք զրկէ Թարվիլուց Երևանը պահպանելոյ համար։

Մամատ խանը, որպէս երևում էր պարզ ինձ հետ խօսելուցը, շատ ուրախ էր Սարդարի առաջարկութեան վերայ, բայց երկիւղ էր կրում Պարսկական զօրքը Երևան մտնելէն, թէ հեշտ է բերելն, բայց արտաքսելը դժուար՝ և անհնարին ինձ նման անզօր տիրապետողի համար։

Հերակլը լսելով իմ զալստեան լուրը, ծածկաբար դիր էր ուղարկել Մամատ խանի վերայ, չընդունէ ինձ, ասա թէ ոչ՝ պատրաստ է Վրացի և լեռնական զօրքով զալ, աւերել նորա երկիրը։ Մամատ խանը մնացել էր երկու ջրի մէջին շուարած։ Ի վերջոյ Հերակլի դիրը ինձ տուաւ, և ես ուղարկեցի Սարդարին Թարվէզ նկարագրելով ամենայն պարագայքը։ Տան և վեց օրից յետը ստացայ Սարդարէն մին ղուրան, որոյ վերայ կնքած էր և երդուած, չդրժել խոստմանցը, այս ինքն օգնել Մամատ խանին և թոյլ չտալ այնուհետև ինչ և իցէ հատուցանել անհաւատին, միայն թէ Մամատ խանը պատանդներ և պարգևներ Շահի համար ուղարկէ։ — իսկ Երևանից զօրք առաքելոյ համար՝ հարկաւոր չէ՝ գրած էր, որովհետև ես պէտք է էս տեղից դորա համար զօրք ղրկեմ, որ Հերակլի հետը պատերազմեն։ Հազիւ քսան երկու օրումը կարողացայ համոզել Մամատ խանին ընդունել Սարդարի առաջարկութիւնները։

Ինքան կացայ Երևան, մինչև պարգևները պատանդների հետը և հնազանդութեան դիրը հասան Թարվէզ և էն տեղից երկու հազար զինուորականք եկին հասին Երևան։ Էս քանի մի ամիսն Երևանու չորս կողմը զբօսալի տեղրանքումը զբաղեցնում էր ինձ Մամատ խանը։ Լրտեսները համբաւ էին բերում, թէ Հերակլը պատրաստվում է զալ Երևանու վերայ, թէև լաւ զիտէինք, ձմեռն մօտ էր, ճանապարհների վատութիւնից չէր կարող զալ, այսու ամենայնիւ պարտաւոր էի սպասել զարնան, մանաւանդ որ Հերակլը իւր զբրութեանց մէջն որ Մամատ խանի վերայ էր գրում, յայտնում էր թէ ինձ յայտնէ՝ չգնամ Թիֆլիզ, որ չի պէտք է ընդունէ։ Ես էս երկու անգամ դիր զրեցի, պատասխանը ոչ միայն չտուաց, այլ և ուղարկած մարդկանց վերայ սպառնացել էր, որպէս թէ սպանել կտար թէ որ դիր բերած չլինէին։ Էս լուրերն ես Սարդարին հաղորդելով՝ նա էլ գրած էր, թէ ինքն էլ պատրաստվում է զալ մեծ բանակով գնալ Վրաստանի վերայ։ Էս լուրերը Հերակլին ծաղրածութեան տեղ էին զալիս, որպէս եկողները կպատմէին։ Յանկարծ աշնան վերջերումը հրաման ստացայ յանձնել պաշտօնս զօրաց հրամանատուին, և գնալ շուտով Թարվէզ, խորհուրդ

անել Սարդարի հետը էս երևելի ճանապարհորդութեան վերայ։

Որդի՛ . . . . . որդի՛ մոռացայ ասել,— լռեց միայնակեացը հարուստ ժամանակ և յետոյ վեր առաւ, -էէ, էէ, էէի մոռացած, այլ խղճմտանքս էր՝ որ ստիպում էր ամաչելուցս լռել, անցկենալ չպատմել քեզ, բայց ըստ որում ամենայն մեղքս իմ բերանօքս մինչև էս տեղ խոստովանեցայ, որն որ էս քառասուն տարուան մէջը ոչ ոքի չէի յայտնած, լաւ է, որ էս էլ ասեմ, որպէս զի ոչինչ չմնայ սրտումս։ Երբ, որպէս ասեցի Երևանու խանը ինձ էս էն կողմն էր ման ածում որսորդութեան և ժամանակ անցկացնելոյ համար, և կամենալով ինձ աւելի ծառայութիւն ցոյց տալ, ինձ հետ իւր պարզ յարակցութիւնը յայտնել կամ թէ և էս պարզ ասած, շահել, ասեց՝ գնանք Էջմիածին Հայոց Աթոռն (օճախն), լաւ տեսնելոյ եկեղեցի է և Կաթուղիկոսը շատ լաւ մարդ է, ի հարկէ Սարդարին նա էս մեծ պարգևներ, և հաղուադիւտ բաներ ընծայ կղրկէ։ Էս սկիզբն փոքր ինչ նազ արի, սիրտս չէր գալիս գնալ էն Աթոռն՝ որ իմ պապերի սուրբ տեղն էր, որոյ վնասին պէտք էի պատճառ լինէի։ Մամատ խանի քանի մի անգամ ստիպմանցն՝ ի վերջոյ համաձայնվեցայ։ վասն որոյ և խանը մարդ ուղարկեց, իմացուցն տուաւ կաթուղիկոսին, որ և նշանակած էր օրն և ժամն։

Մին շաբաթի օր, կէս օրից յետը դուրս եկինք Երևանու մեծ բազմութեամբ և հինգ Երևանցի Հայոց երևելի Մէլիքները հետերնիս էին։ Ղանապարհումը աշխատեցի Հայերիցը մինին գոնէ միայնակ գտնէի, հետը Հայերէն խօսէի, ցոյց տայի թէ և ես Հայ եմ սրտով և Հայի որդի,— բայց չելաւ, չկարողացայ էս պատեհ ժամն գտնել — Մամատ խանը մինչև Էջմիածին՝ կանգնաչափ չհեռացաւ ինձանէ։ Քանի քանի անգամ դիւղեր և վանքեր պատահելիս՝ Հայերիցը մինին յառաջ էի կանչում, հարցնում այս ի՞նչ տեղ է, այն ի՞նչ վանք է, ի՞նչ իրաւունք ունի Կաթուղիկոսն իւր ազգի վերայ, ի՞նչ ասել է՝ վարդապետ, եպիսկոպոս, ե՞րբ է շինած Էջմիածինը, ի՞նչպէս են ընտրում կաթուղիկոս, ո՞վ է այժմեան Կաթուղիկոսն և ի՞նչ է նորա անունը, քանի՞ միաբանք կան, որքան դիւղեր կամ հող ունի ևն, ևն։ Սիրտս լեքն էր, դողդողում էր, թէ երբ և ի՞նչ կերպով յայտնեմ իմ ո՞վ լինելս։ Չէ . . . . . չելաւ էլի, չկարողացայ սրտիս խորհուրդն կատարել։

Էկս ժամաչափ ճանապարհ Աթոռին մնացած՝ տասնաչափ վարդապետք եկած էին մեզ ընդ յառաջ և սպասում էին մին վանքի դաւթի մէջը, ուստից երբ մեզ տեսին, դուրս եկին զգեստաւորուած, մեր գալուստն շնորհաւորելոյ, ընկան մեր առաջն մինչև Էջմիածնայ պարսպի դուռն, ուր մին սպիտակամօրուս եպիսկոպոս, որ փոխանորդ էր կաթուղիկոսի, իւր միաբաններովը խաչով, խաչվառով սպասում էին մեզ։ Հինց հասանք սոցա մօտն՝ սկսեցին երգել, և կաթուղիկոսի փոխանորդը կամ տեղապահը մօտեցաւ ինձ և Մամատ խանին ու թուրքերէն շնորհաւորեց մեր գալն և հրաւիրեց պարսպիցը ներս գնալ։ Էս տեղ ես չկարողացայ հանդուրժել, սկսայ արտասուել։ Մամատ խանը զարմանալով հարցրեց պատճառը։ Էս, պատասխանեցի, նայելով էս ալեզարդ ծերունուս հա-

սակին, միաքս եկաւ թէ արդեօք և ես պէտք է էս հասակին հասնեմ, և կամ թէ էս ալէզարդ ծերունին ի՞նչ է մտածում աշխարհքիս անցողական փառաց համար, որն որ փորձած — տեսած է . . . : Էսպէս թէև կցկտուր խօսքերով կարկատեցի լաց ընելուս պատճառը, բայց . . . . : բայց և ես հասկանում էի որ չկարողացայ հաւատացնել, համոզել նրան: Հայոց հոգևորականները մէջերնուն խօսում էին իմ լաց ընելու վերայ, որն որ և ես փոքր ի շատէ լսում էի, հասկանում էի: Էսքանն է մտիս, որ մին ծերունի վարդապետ ասում էր. սորա լաց ընելը Հոգւոյն Սրբոյ շնորհքն է, որ մեզ սա խրդճայ և ողորմայ: . . . Լաւ նշան է անօրինի տեսնելն էսպէս քրիստոնէական փառաւոր հանդէսն և արտասուելը:

Մի նեղ փողոցի միջովն անցանք, մտանք մին փոքր դուռն և դուրս գնացինք Էջմիածնի դաւիթը: Վ՚եր ելանք Կաթուղիկոսի պալատը կամ որպէս նրանք անուանում էին, Վ՚եհարանը, ուր ծերունի Կաթուղիկոսը բաղմած էր գահի վերայ: Էս ժամ Կաթուղիկոսի մօտը նստեցանք, շատ չնչին առարկաների վերայ խօսեցինք, որոնք միաքս չէ, և յետոյ գնացի ես ինձ համար պատրաստուած փառաւոր սենեակը: Մամատ խանը մնաց Կաթուղիկոսի մօտը: Կարող եմ ասել մերձ հազարաւոր ձիաւորք կային մեզ հետ: Էթոռը ներս մտնելու ժամանակը՝ աղմուկը տեղի տուաւ մեռեալ լռութեան, որպէս թէ ոչ ոք չէ մտած էս Էթոռն, ոչ ուտելեաց, ոչ տեղի և ոչ ձիանց կերակրոց համար, ինչպէս ուրիշ տեղրանք տեսած էի: Էս տեղ այնուհետև ձայն, աղմուկ դուրս չեկաւ, էնպէս բարեկարգած էր Էջմիածնայ Էթոռը: Էս մնացի միայնակ ժամաչափ: Մին էլ ներս բերին երկու խոնչայ, դրին առջևս ու վրի ծածկոցն վեր առին: Նայեցայ խոնչէքանց մէջին մին մեծ՝ մին փոքր ժամացոյց, երեսուն գաղ (ինչպէս որ յետոյ չափեցինք տեսանք) դիրայ, քսան գաղ մահուդ քանի մի գոյն, երկու մեծ և փոքր հայելիք, տասնաչափ դանակներ կերպ կերպ, տասնութը գլուխ շաքար, երկու լիտր խահվէ: Ներող վարդապետն յստակ Պարսկերէն վեր առաւ. Խան, Կաթուղիկոսը (Խալիֆէթուլխալիֆէն) ուղարկեց ձեզ համար էստունք ատամի վարձ (դիշ քիրասի): - Ատամի վարձ, ի՞նչ ասել է վարդապետ, հարցրի զարմանալով: Մեր Էթոռի սովորութիւնն է, — պատասխանեց վարդապետը, - ամենայն մեծամեծաց, հասնելիս մեր (օջաղն) վանքն, նրան ատամի վարձ անուամբ ընծայ քաշել: Էս լռեցի բոպէչափ, և ապա վեր առայ, ի՞նչ տեղ ես սովորած Պարսկերէն լեզուն: Նա պատասխանեց, ես ծնած եմ Ասպահանու Ջ՚ուղումը: Ո՞ւմ որդին ես, հարցրի: Նա պատասխանեց, այս ինչ այն ինչ մարդոյ թոռն և որդին եմ: Ճանաչ եկաւ երբ պապի և հօր անունը լսայ, վասն որոյ վեր առի, ունիս ազգական Շ՚իրազ էդ անունով: Այո՛, պատասխանեց վարդապետն, այս ինչ այն ինչ մարդիկ եղբարքս են, որք Ասպահանու գնացել են Շ՚իրազ վաճառականութեան համար և պսակուած էն տեղ մնացած են: Էս սկսեցի նորա եղբարց, որդւոց և աղջիկների, կանանց, քուերց, ազգականների անունները մի ըստ միոջէ ասել, ուր տեղ տուներնին է, և ինչպէս աներ ունին: Վ՚արդապետը զար-

մանալով նայեց երեսիս ու հարցրեց, Խան, ի՞նչ տեղաց է յայտնի քեզ էդ անունները։ Պատասխանեցի, ես Ալլահվերդի խանի որդին եմ, որ Հիրաղու Հայերի գլխաւորն էր։ Ուրեմն ասաց վարդապետը, Դէորգի խանի թոռն էք, Նաղուբ խանն էք . . . ինձ չէք ճանաչում։ Ես ասեց ու սկսեց հայերէն լեզուաւ իւրեան ծանօթացնել, էս կողմը էն կողմը նայելով, որպէս զի ոչ ոք պարսիկ չլինի էն տեղ ներկայ։ — ես քանի մի ամիս ասաց՝ տիրացու ժամանակս քեզ հայերէն դաս եմ տուած, անունս էր տիրացու Կարապետ, այժմ վարդապետ ևլն։ ևլն։ Ի հարկէ նրան տեսած էի առանց մօրուսի և հիմի՝ որ լաւ նայեցայ՝ ճանաչեցի, ուզում էի վեր կենալ ձեռքն համբուրել և ահա էս միջոցին Մամատ խանը ներս եկաւ, խօսքերնիս ընդմիջեցինք և Կարապետ վարդապետը վերկացաւ կանգնեց, գլուխ տուաւ դուրս եկաւ, իմ շնորհակալութիւնս տանէ մատուցանէ Կաթուղիկոսին։

Ուղեցի տեղեկանալ Մամատ խանէն, ի՞նչ ասել է ատամի վարձ ասած բանը։ Սա սկսեց երկարօրէն պատմել ինձ, թէ երբ ես կամ որդիքս կամ եղբարքս՝ էս տեղ գանք, ինչպէս հին ժամանակէ ի վեր մնացած է էս սովորութիւնը, կառնենք իւրաքանչիւր ծառայի համար հինգ հինգ հազար դիան, երիվարաց երկու և ջորեաց մին մին հազար դիան։ Դու ինձ կամ եղբարցս համար կիսօսինք դին կկտրենք, երբեմն շատ՝ երբեմն քիչ, ժամանակը դիտէ, զոր օրինակ, եթէ նոցա զատիկն է, ի հարկէ շատ կլինի, թէ էնպէս ժամանակ է՝ մին երևելի օր չէ՝ մին կերպով շատով քիչով անց կկենանք, մեր մէջը կհամաձայնվինք, և հիմի շատ խօսեցի գինը վերջացրի, էնպէս որ ձեր ծառայիցն շինել տուի մին մին թուման, երիվարաց չորս և ջորեացն երկու երկու հազար դիան։ Ես զարմացած մնացի Մամատ խանի խօսքերի վերայ, մտածում էի՝ միթէ Էջմիածինը գանձարան ունի որ ինքնաբոյս է, կամ աղբիւր կայ էն տեղ՝ որ ոսկի կամ արծաթ է բղխում։ Հատ կպատահի, հարցրի, քո և եղբարցդ կամ որդոցդ Էջմիածին գալը։

Տարին, պատասխանեց Մամատ խանը, մին երկու անգամ իմ գալը կպատահի, և մին անգամ ազգականացս, էն էլ Հայերի զատիկին։ Նոցա կդրկեմ իմ կողմիցը՝ որ Հայերի զատիկը շնորհաւորեն։

Ես չուզեցի հետաքրքիր հարցմունքներ աւելացնել, վախենալով թէ յանկարծ բարկանամ ու հակառակ խօսիմ, փոխանակ բան շինելոյ՝ աւերեմ, վասն որոյ լռեցի և հրամայեցի ընթրիք տան։

Առաւօտեան ալէգարդ Կաթուղիկոսը քահանայապետ եպիսկոպոսաք եկաւ ինձ տեսութիւն։ Ես ուզեցի ներս գալիս տեղից վերկենալ և մոքումս դրած էի աջն էլ համբուրեմ։ Մամատ խանը թոյլ չտուեց վերկենալս, ասելով ամօթ է քեզ մին Հայի համար վերկենալ։ Ես և յիմարութեամբ նորա խօսքին ականջ դրի, բայց յետոյ շատ փոշիմանեցայ։

Կաթուղիկոսը հրաւիրեց մեզ գնալ Տաճարը պատարագի ժամանակը։ Ես թոյլ չտուի Մամատ խանին խօսել, իսկ և իսկ՝ որպէս զի նա չբացասէ, վասն որոյ համաձայնուեցայ և հարցրի, ե՞րբ է նշանակում՝ գանք Տաճարը։ Պատասխանեց Կաթուղիկոսն, մին ժամից յետոյ։ երբ իմ համաձայնութիւնը լսաւ, փոքր ինչ

խօսելուց յետը Կաթուղիկոսը շատ ուրախութեամբ վերկացաւ դուրս գնաց, ես էլ ոտի վերայ կանգնեցայ ու մինչև դուռը գընացի ուղեւորել։ Նշմարեցի, որ էս շատ ընդդէմ էր Մամաա խանին։

Ժամաչափ սպասելով՝ զանգակները խփուեցան. լուսամուտիցը նայում էի, ինչպէս Կաթուղիկոսն իւր փառաւոր հոգեւորականաց հանդէսովը մտաւ Տաճարն, ուստի նոյն Պարապետ վարդապետը վերադարձաւ եկաւ մեզ հրաւիրելոյ։ Մեք էս շատ բազմութեամբ գնացինք մտանք Տաճարը։ Էս, որդի, չեմ կարող հիմի, էն սրտի զգացմունքն, որ էն օրը զգում էի, հիմի, հիմիկուան էս լեզուովս քեզ պատմեմ։ Ինքանն ասում եմ՝, որ շատ հեռաքրքիր էի նայում էս — էն կողմը, էն հին Տաճարին եմ ասում՝, որոյ ժամանակից հնացած և մաշուած կամարների տակին՝ երկու հարիւրից աւելի հոգեւորականները զարդարուած, զգեստաւորուած՝ ոմանք թագերով, ոմանք թանկագին շուրջառներով, կամ գաւազան, կամ բուրվառ ձեռքերնումը կարգ կարգ կանգնած, միմեանց հետ քաղցր և ներդաշնակ աղերսախառն ձէնով երգում էին էն աղօթքները՝ որոնք երեխայութեանս ժամանակը լսած էի։ Մտքէս անց էր կենում էն հոյակապ տաճարի մէջը ի շինութենէ ոտի քանի քանի քրիստոնեայ և անքրիստոնեայ, բարի և անբարի թագաւորներ, իշխաններ կանգնած աղօթած են, քանի քանի այլակրօն տիրապետողներ մտած են դրսիցը աչքերով նայած, քննած՝ դուրս եկած։ Ո՞ր էին նրանք, — նոցա ստուերն անգամ չէին երևում։ Էն, հաւատուրաց ո՞մն, նրանց կանգնած տեղումը հիմի կանգնած, փքվում ուռչում եմ՝, ինչի՞, ըստ որում ունայն է աշխարհս և նրա փառքն ոչինչ։

Մինչև Ա՜ը Ա՜ը ասելն ես մտաք ցընորուածի նման էի, էն սուրբ խորհուրդի ժամանակն ամեն ուշքս ու միտքս գլուխս դալով, ջերմեռանդ սրտով մեղայ գոչելով մտքումս, սկսեցի աղօթելն։ Ինքան անընդդայ էի, որ չէի իմանում ո՞ւր եմ և ո՞վքեր կան մօտս. մին էլ այն զգացի, որ երեսիցս տաք տաք արտասուքը կաթիլ կաթիլ թափուեցան մօրուսիս վերայ։ Թէև գըլուխս խոնարհացրի՝ որպէս զի ուրիշները չնշմարեն, բայց չեղաւ, աչքիս պոչովը տեսնում էի՝ որ մօտիս կանգնածները նշմարեցին ու լաւ տեսան։ Էս ինձ չկոտրելոյ համար երկար միջոց աղլուխս չհանեցի արտասուքս սրբելոյ համար, բայց տեսայ չէ լինում, հանեցի աղլուխս որպէս թէ քիթս եմ սրբում. մին կերպով աչքերիս արտասուքն էլ սրբեցի ու քարացած կանգնեցայ մինչև պատարագը վերջացաւ, յառաջ գնացի՝ մօտեցայ Աւետարանը համբուրեցի՝ դուրս եկայ ժամիցը, ինձ էս հետևեց Մամաա խանը։ Էս տեղ իմ մահը ու կեանքը, բախտաւորութիւնն ու տարաբախտութիւնը մեռածի նման եղաւ, ըստ որում Մամաա խանը կամ միւսները արդէն իմացան կամ քրիստոնեայ եմ՝ կամ թէ համոզուեցայ քրիստոնէանալ։

Այնուհետև շատ փոքր կնստէինք սենեակումը, բայց ի հայի ժամանակը, մնացեալ ժամերնիս Աթոռի ամենայն երևելի տեղրանքն էինք գնում տեսնելոյ, ուսումնասիրելոյ։ Ինձ շատ զարմանալի թուեց տպարանը, որոյ մասին շատ լսած էի, բայց չէի տեսած, և սեղանատունը, ուր երկու հա-

բիւր հոգիէն աւելի կճաշէին, հացատուները, ուստից վեց հարիւր մարդից աւելի հայ կուտէին ևն։ ևն։

Մամատ խանը երևի կասկած էր առած ինձանէ, որ էլ չէր հեռանում մօտիցս և ես աշխատում էի, որպէս զի մին Հայ առանձին կարողանայի գտնել ու սրտիս խորհուրդը ապսպարել Կաթուղիկոսին, բայց անկարելի եղաւ։ Երբ սեղանատունը նայելոյ էինք գնացել, Կարապետ վարդապետին այսքան կարողացայ քանի մի բառով ասել թէ, ես տեղ չկարողացայ քեզ տեսնել, Երևան կսպասեմ, շուտով գաս։

Յանկանում էի շատ մնալ Էթոռումն. և սրտիս փափաքն կատարել, բայց նայելով էնքան բազմութեան ծախքին, որ իմ պատճառաւ էր ինաս դիպչում Էթոռին, վասն որոյ չորրորդ օրը, այս ինքն երեքշաբաթի օրը վերադարձանք գնացինք Երևան։ Ես բանից անտեղեակ, մի՞ ասել Մամատ խանը իւր մարդոյ բերանով խօսեցած է լինում Կաթուղիկոսի հետը, որ ինձ հարիւր և Սուլէյման խանի համար հինգ հարիւր թուման պատրաստի դրամ և էնքան էլ հաղուստ բաներ ընծայ պէտք է տայ։ Կաթուղիկոսը զանազան պատճառներ բերելով, չէր ուզեցել տալը։ Մեր դուրս գալոյ ժամանակը Կաթուղիկոսը մինչև պարսպի դուռն եկաւ ճանապարհ ձգելոյ և տասնաչափ սպիտակամօրուս վարդապետներ մինչև կէս ճանապարհը։ Նոցանէ հեռանալիս, իմ շնորհակալութիւնս որպէս Կաթուղիկոսին, նոյնպէս և վարդապետացը շուտ շուտ յայտնելիս, ողորմելիքը կրկնում էին, նեղէ աւել պակասին, սևերես ենք քեզ մնա, Ստուծով ժամանակաւ քեզ ծառայութիւն կանենք, և այլ էսպէսի խօսքեր։ Ես չէի հասկանում նոցա ասութիւններն և նպատակները։

Երևան, երկրորդ օրը, Կարապետ վարդապետը երկու ուրիշ ծերունի եպիսկոպոսաք, որոց մինի անունը Մինաս էր, եկին ինձ տեսութիւն մեծամեծ ընծաներով և Կաթուղիկոսի գրովը թէ Սարդարի համար և նորան արժանի՝ հաղիւ կարողացանք էս ընծաները պատրաստել կարճ միջոցումն ևն։ Ընծաները թէ պատրաստի դրամը և թէ միւս բաները մերձ հաղար թումանի կլինէր։ Ես զարմացայ թէ էս ինչ ընծաներ են, մի՞թէ, ասացի եպիսկոպոսաց, ձեր արտերն ոսկի են բերում կամ ջրերնիդ արծաթ են դառնում։ Եպիսկոպոսները պատասխանեցին ինձ Մամատ խանի ստիպելն էս ընծաների համար, և թէ էն տեղ Էթոռումն և ճանապարհին ևս ասած էր խաները վանականաց՝ թէ իբր թէ դու խոռոված ես գնում Կաթուղիկոսէն, և թէ Թարվեղ գրելոց ես Սարդարին՝ քեզ արժանի քո պատուին չընդունեցին Էթոռումն ևն։ ևն։

Ես շատ երդմամբ հաւատացրի, որ երբէք էդ մասին մտածած ևս չեմ նախ, երկրորդ հրամայեցի՝ իսկ և իսկ ինձ տուած Էթոռումն ընծաները բերեն ու վերադարձնեն նոցա։ Յայտնեցի նոցա ծածկաբար քրիստոնեայ լինելս, և Հայաստանեայց Եկեղեցւոյ աւազանի որդի։ Նշանակեցի Կարապետ վարդապետը քանի մի գիշեր զայ իմ սենեակումն ժամերգութիւն կատարէ, և կիւրակի օրն խոստովանուեցայ և հաղորդուեցայ նրա ձեռամբը։ Կարող է ամենայն ոք լաւ հասկանալ թէ եպիսկոպոսաց և Կաթուղիկոսին ինչ ուրախութիւն էր

ինձպէս մին անառակ որդին վերադարձնել Եկեղեցւոյ ծոցը։ Մինաս եպիսկոպոսը, որ նոցանէ աւելի ծեր և խելացին էր, առաջին անդամը լսելիս իմ բերանէն քրիստոնեայ դոլս, ուրախութիւնից սկսաւ լալը ու դառն արտասուէին։ Սա շատ խնդրեց ինձ, այնպէս անել որ իմ գնալուց յետը Մամատ խանը չնեղացնէ Աթոռին։ Սա էնպէս աղդու կերպով իւրեանց նեղութիւնները նկարագրեց ինձ, որ ես էլ արտասուեցայ։ Սրան յանձնեցի Էջմիածնումը տուած ինձ և Սարդարի համար հիմիկուան բերած ընծաները առնէ յանձնէ Կաթուղիկոսին, իսկ միւս երկուսին քսան օր պահեցի Երևան, երբեմն ես նոցա և երբեմն նոքա ինձ մօտ կլինէին, մինչև որ Սարդարիցը Կաթուղիկոսի համար խիլայ և հրամանագիր բերել տուի, որպէս զի ոչ ոք չհամարձակէ այնուհետև Հայոց Աթոռին նեղութիւն տայ, և եթէ պատահի մին էնպէս բան, Կաթուղիկոսը հաղորդէ ուղիղ Սարդարին։

Լսում էի, որ Մամատ խանը շատ ստրջացած էր ինձ Էջմիածնայ պարսպի մէջը կոխելը, ըստ որում մինչև էն ժամանակը կարծում էր, ոչ թէ կարծում էր, այլ հաւատի էր նրան որ Էջմիածինը իւր զանձարանն է, բայց այնուհետև ինձ նման պահպանողիցը շատ երկիւղ էր կրում։ Մինչ այս մինչ այն, որպէս վերն ասեցի, Սարդարիցը հրաման ստացայ գնալ Թարվէզ։ Երևանու դուրս գալուցս երկու օր յառաջ, որ Կիրակի էր, առաւօտեան լոյսը չծագած՝ գնացի Էջմիածին, հասայ պատարագին։ Պատարագից յետը գնացի Կաթուղիկոսի աջը համբուրելոյ և հրաժարական օրհնութիւնը ժառանգելոյ։ Էն ժամանակը խորհուրդ տուի Հոր Հինգ հարիւր թումանի հագուստեղուն բաներ մին եպիսկոպոսի ձեռամբ ուղարկէ Թարվէզ Սարդարին ընծայ ինձ հետ կամ քանի մի օր իմ դուրս գալուց յետը։ Ողորմելի ծերունին ընդունեց առաջարկութիւնս ուրախութիւնով և շնորհակալութիւնով։

Երբ հասայ Թարվէզ, էնպիսի երևելի ծառայութիւններիս համար Սարդարը շատ պատուով ընդունեց ինձ և մեծ շնորհ էր ցոյց տալիս։ Կաթուղիկոսի ուղարկած եպիսկոպոսը աշխատեցի շուտով վերադարձնել խիլայով և լաւ հրամանագրերով Էջմիածնայ անշարժ կալուածոց համար։

Օր ըստ օրէ յառաջադէմ էի լինում Սարդարի մօտը և երևելի գործեր ինձ էր յանձնում։ Իմ ձեռամբ էին կատարվում իմ միջնորդութեամբ հնազանդված քաղաքներին վերաբերեալ գործքերը, որպէս թէ նոցա վերայ իշխողը ես էի։ Մինչ իմ վերադառնալը Ջաֆար Ղուլի խանը, Խոյեցի Հիւսէյն խանի որդին, որպէս ինձ մերձ ծանօթ և երախտապարտ, առաջինը տիրապետողաց մէջը, թէպէտ եկած էր ուղեղ մինչ ես Երևան էի, և իջած Սարդարի տանը, որպէս թէ իւր գլուխը հաւատացել էր Սարդարին, վասն որոյ և Սարդարն նորա հպատակութեան և բարի օրինակ լինելոյ, մանաւանդ նորա տուած բարի խորհրդոց համար շատ էր սիրում, վասն որոյ Աղայ Մամատ խանէն նորա համար շնորհած հրամանագիր էր բերել տուել, այսու ամենայնիւ զդում էր, որ ինձ պարտական էր էն ամեն իւր պատուի և յառաջադիմութեան համար։ Յանկանալով ապացուցանել իւրեան երախտապարտութիւնը, միջնորդ եղաւ ինձ համար զան-

ձապետութեան աստիճան առաւ Սարդարէն։ Ատրպատականի բախտը, վիճակն էս երեքիս ձեռքումն էր, այսինքն Սարդարի, Ջաֆար Ղուլի խանի և իմ։ Երբ ես տանիցս դուրս կը գայի, հազարաւոր մարդիկ առաջիս ու յետոյս կընկնէին։ Ամբումն բարեբախտութեան ծայրն էի հասած։

Էս միջոցումը, մինչ Սարդարը պատրաստվում էր Վրաստանու վերայ գնալ, Աղայ Մահմատ խանէն հրամանագիր եկաւ չգնալ սպասել մինչև իւրեան գալը, որովհետև ինքն մտադիր է ծանր զօրքով գալ՝ գնալ՝ վրէժխնդիր լինել։ Էս տարի և մեր ուշանալն իմ երևակայութեամբը, փառաց հանդէս բաց արեց ինձ համար, այս ինքն,

Ահմատ խան Մարաղու տիրապետողը, որ Ատրպատականի թերևս էն ժամանակը՝ բոլոր Պարսկաստանի առաջին հարուստ և երևելի անձն էր, հետս ծանօթացաւ, տեսնելով որ ձեռքումս իշխանութիւն կայ և շատ զործում կարող եմ հարկաւոր լինել իրան, առաջարկեց ինձ փեսայանալ։ Ոչ ինչ դժուարութիւն, ոչ ինչ խղճահարութիւն չկարծոցան արգելաւոր լինել ինձ նորա առաջարկութիւնը ընդունելոյ համար։ Կենացս փոփոխութիւնը՝ ներկայացրեց ինձ դարձեալ այլ իմն երջանիկ դար։ Թանի մի ամիս յառաջ գլխիս անցած Էջմիածնու և Երևանու ներդործութիւնները մոռացայ իսպառ։ Առաւաւուն օր, քառասուն դիշեր հանդէսով հարսանեացս ուրախութեանց յիսոյ, խոսովանվեցայ ամենից փեսայ, ումբ, էն էլ Ահմադ խանի նման մարդոյ, որ էն օրերումը բոլոր Պարսկաստանի մէջը ամենից հարուստն էր և զօրեղը։ Սարդարի քաղաքականութեանը շատ յարմար էր իւր ստորադրելոց խնամենանալը էնպիսի երևելի տիրապետողի հետը։ Նախնեաց առածը կարողացայ ապացուցանել թէ, էնպէս թուրքացել ես՝ որ հօրդ խաչը էլ չես ճանաչում։ Մինչև էն ժամանակը՝ ծածկաբար գինի կխմէի, երբեմն երբեմն քրիստոնէութեան վերայ կմտածէի, Հայերի հետը ծածկաբար հաղորդակցութիւն կանէի, բայց . . . . բայց այնուհետև էնպէս կոշտ և կուշտ եղայ, որ նրանք էն աստիճան ատելի եղան ինձ, որ քրիստոնէի անունն անգամ լսելս զզուելի էր ինձ, և որպէս թէ նրանց ընդդէմ մին անսրբոյթ ատելութիւն էր զոյացել սրտումս։ Էն օրերը բոլոր պարսկաստանումը մի միայն Մարաղէն էր Հայոց համար ապաստանարան անպնջական, և Ահմադ խանի հարստութեան աղտգաւ, որ շատ սիրելով իւր օգտի համար էն աշխատասէր ժողովուրդը՝ հաւաքել էր իւր հովանաւորութեան տակը։ Երզրում, Ղարս, Բայազէդ, Վան և Խոյ Հայ վաճառականներ ունէր նստացրած, ամենքին էլ առանձին առանձին մեծ դումարներ էր յանձնած, առևտուր անեն, որ և մեծ օգուտներ էին բերում։ Հիմի եթէ նա իւր հարստութիւնը մահմեդականաց ձեռքը ձգէր, անշուշտ ոչ միայն ապարդիւն կմնար, այլ և տուածը չէր կարող վերաստանալ։ Էս նորա արարմունքին չհանդուրժելով, սկսեցի խորհուրդ տալ, ինչ հնարք կարող էր՝ զործածել, աշխատել Հայերին զոնէ թուրքացնել։ Ես հա որդի, ասեց միայնակեացը . . . ասէ . . . տեսնես ես ի՞նչպէս բարի մահմեդական էի եղած, և որքան էի ցանկանում այն օրէնքի տարածումը։

Չէ, չեմ մոռանալ. քաւ լեցի թէ մոռանամ։ Երբ շատ անգամ կրկնեցի . . . սարսափեցի աներոջս հետևիլ խորհրդիս — Հայերին մահմեդականութիւնն ընդունել տալոյ համար, — մին օր ոչ դէս, ոչ դէն, յանկարծ պատասխանեց. փեսայ, փեսայ . . . . . Ծնողացդ կամ ստնտուիդ արիւնը կամ կաթը պէտք է եղած լինի Հայի արիւն կամ կաթը, էդ քո ստիպելդ՝ ինձ կասկածանաց մէջ է ձգում, ապա թէ ոչ՝ քեզ ի՞նչ հարկաւորութիւն նոցա կրօնին և հաւատին, երբ ինձ, քեզ, կամ այլոց, օրպէս փորձուած և տեսնուած է, մեր ազգակիցներէն, հաւատակիցներէն աւելի հաւատարիմ են ծառայութեան և առևտրի մէջը։ Այս կարճ պատասխանը ինձ ստիպեց լռելոյ և մի՛ այնուհետև Հայերին վերաբերեալ մին խօսք ասել նրան, ըստ որում տեսայ նորա խօսքը շատ ճշմարիտ էր։

Այս ազնիւ և հակիրճ պատասխանից յետոյ սկսեց խղճմտանքս կրկին անհանգըստանալ, կրկին աներևութաբար հակիլ քրիստոնէութեան կողմն, ամենայն ժամ ամենայն բովպէ մտքիցս անց էր կենում մին հնարքով ձեռք բերեմ քրիստոնէութիւնը։ Ասում եմ անամօթաբար մին հնարքով . . . . . ի՞նչ հնարք էր հարկաւոր ինձ, մի՞թէ չէի կարող առաջուան նման ներքուստ քրիստոնեայ լինիլ. մի՞թէ չէի կարող Հայերին հակառակ չխօսել և չներգործել. մի՞թէ չէի կարող տարին մին անգամ Թարվիզու նման տեղումը, ուր շատ Հայք կային, տունս ծածկաբար քահանայ բերել տայի և խոստովանուէի, հաղորդուէի։ Զարմանք է, երբ էս անտիճանի հոգիս զզում էր՝ միշտ հակառակ կողմն էի ինձ ապաստան շինում։ Հիմի երևակայում էի, կնոջս էնքան խանդակաթ սիրում եմ, և արդէն յղի է, սպասում եմ ժառանգ տեսնել, անեբս աբեղարդ եօթանասուն տարեկան մարդ, շուտով կմեռնի և ես մեծ կարողութեան տէր կլինիմ, Սուլէյման խան Սարդարի գանձապետն եմ, և բոլոր Ատրպատականը առաջիս խոնարհում է, ընդ հակառակն ուր զնամ քրիստոնէութիւնս շարունակեմ, երբ վերոյիշեալների ոչ մինը չեմ կարող ձեռք բերել։ Տես, որդի՛, մին մարդ, ինչ կերպ մարդկանց ընկերակցութեամբ իւր կենաց մեծ մասն անց է կացնում, կամ պարզն ասած, ինչ մարդկանց հետը նստում է ու վեր է կենում, ի՞նչպէս է նրանցից իւրեան բարոյականութիւնը ստանում։ Իմ կարծիքը էն է, որ շատը վատ մարդկանց հետ ընկնելով, իւրեանց ապագայ կեանքն ապերջանիկ են անում, թէև աշխարհից փառաց և պատուոյ ծերն էս են հանում։

Այս տեղ միայնակեացը գլուխը քաշ ձրգեց և տասն րոպէ աչքը փուռ մնաց, և յետոյ վերառաւ, էհ որդեակ՝ շատ խօսելէս գլուխս սկսեց ցաւիլն. երկար խօսելը չէ էնքան ինձ զզալի, որքան անցեալ կենաց վատ յիշատակներն կրկին միտս բերելս, ինձ սրտամաշուկ է անում։ Բաւական է . . . բաւական, որքան պատմեցի, ներէ՛ ինձ . . . Տէր ընդ քեզ։

Երդարև ես էս նշմարեցի որ ողորմելի ծերունոյ ձեպ ձերմակ և կարմրաժեռ երեսը՝ սրտի նեղութենէն մեծ փոփոխութիւն էր ստացել, և վառվառ վառվում էր, աչքերն էլ կրակի նման շուռմուռ գալով պլպլում էր և բոլոր անձը դողդողում էր, վասն որոյ ես էս կանգնեցայ, կիսաբերան

մնաս բարեւ ասելով, չգիտեմ ինչի, տըրտու�տխուր հեռացայ նրանից, շարունակեցի զառ ի վայր ճանապարհս դէպի վանքը։ Վանականք եւս նշմարեցին իմ կերպարանքի վերայ տխրութիւն, որոյ պատճառն եւ ինձ անհասկանալի էր՝ նոցա ասեցի, վասն որոյ ամենայն օրուան նման էլ նրանք չհարցրին պատմեմ նոցա միայնակեացի ասածները։

Օգոստոս 27-ին առաւօտեան ուշ վերկացայ քնից, վասն որոյ եւ խնդրեցի վանահօրը փոքր ինչ կերակրեղէնից, ուտելիքից տայ ծառայիս, որ վերառնէ բերէ հետս, դիտէի որ ուշանալուս համար չեմ կարող ճաշուան ժամանակը վերադառնալ, եւ խեղճ վանականացը ինձ սպասելոյ պատճառ կլինիմ։ Հա, մոռացել եմ յիշել, որ ամեն օր դէպ ի քարայրը գնալս կտեսնէի ճանապարհին էս քարափի էն քարափի վերայ ուխտաւորների բերած նոր նոր պաշարներ լոշումը փաթաթած դրած, եւ երկրորդ օրը գնալս կնայէի առաջուան տեսածներս կամ չէին երեւալ, կամ թէ ցրուած դեռնի վերայ էս տեղ էն տեղ ածած կը լինէին։ Ի հարկէ միայնակեացը, որպէս որ երեւում էր, նրանցով էր կերակրվում, նրանց տասնիցը մէկը չէր կարող տանել ուտել, անշուշտ չորեքկողմի գազաններն եւ թռչուններն էլ էին նրանցով կերակրվում։ Ահա, էս էր պատճառը, որ վանքի միաբանները կարծում էին՝ միայնակեացն առանց կերակրի եւ հացի է ապրում։

Երբ հասանք քարանցաւի դուռը, ծառայիս ձեռքէն առի ուտելեաց կապոցն ու ներս մտայ միայնակ։ Միայնակեացը պարկած էր, ինձ հէնց տեսաւ, վերկացաւ նըստեց, նայեց ձեռքիս կապոցին, մինչեւ իմ ողջոյն տալս, ասեց, էդ ի՞նչ, երեւի միւս օրուան պարգեւներդ ընդունելս՝ առիթ տուեց քեզ միւս անգամ ընծաներ բերել։ Ոչ, պատասխանեցի, ոչ հայր սուրբ, այս իմ նախաճաշիկն է . . .

. . . հետս բերի խնդրել քեզ, բարեհաճէք էս օր միասին վայելենք, ինձ զղալի է, որ դու իմ քաղցածութեան համար մոռածում ես ամենայն օր։ Սիրելի՛, ասեց միայնակեացը, որպէս տեսնում եմ, դու աշխատում ես էդպիսի բաներով ինձ կամաց կամաց եւ հնարքներով փոփոխացնել, որպէս զի աշխարհիս զեղխութիւնը ճաշակել տալը սովորցնես։ Ես իմ չորրաբեկ հացովը բաւական եմ եւ ուրախ։ իմ ուխտաւորներն էնքան ուտելիք են բերում, որով ոչ թէ ես, այլ եւ քսան քեզ նմաններն էլ կարող են կերակրուիլ։ Բաւ լեցի՛ հայր, ընդմիջեցի նորա խօսքը, Աստուած երկինք, թէ ես էդ դիտաւորութեամբ յաճախում լինիմ քեզ մօտ, որպէս եւ էն օրն էլ երդուեցայ։ Իմ նպատակս ոչ այլ ինչ է, կրկնում եմ, եթէ ոչ քո օրհնութիւնը ժառանգել, եւ էդ ակառատես հնութիւնները, որք կվերաբերին ըստ մեծի մասին մեր քաղցր հայրենեացը, — մեր քաղցր հայրենեացն եմ ասում, չթողուլ թաղուած մնան էս քարանցաւի մէջը։

Հայրենիք բառը, նշմարեցի, խոր ներզործեց բարի միայնակեացի սրտումը, վասն որոյ եւ քանի մի անգամ հայրենիք հայրենիք կրկնելով, ասեց, չեմ մոռացած որդի՛, չէ, չեմ մոռացած, առաջուան քո զրոյցը թէ, մեր հայրենիքն այժմ երջանիկ է. . . . երջանիկ է Հայաստան . . . :

երջանիկ նորա որդիքը . . . եթէ . . . էն Պարսիկ անիրաւ տիրապետողաց յուղկահարութենէն, գերութենէն ազատուած են։ Քանի՞ քանի՞ արիւնհեղութիւնք, սովք, գերութիւնք, երկրէ երկիր գաղթականութիւնք, ես . . . ես մեղաւորս ակնատես եմ եղած. աշխատեցէք, աշխատեցէք ուրեմն ամենայն եղանակաւ էդ ձեր ազատութիւնը բարբարոսների ձեռքից՝ աղնիւ երախտագիտութեամբ փոխարինել։ Ա՞յր պատասխանեցի, հա՞յր, առանց մնապարծութեան կարող է իւրաքանչիւր Ա՞յն հպարտանալ, որ ոչ մին ազգ, որ տէրութեան որ հնազանդել է, թէ մեծ է եղած և թէ փոքր, էնպիսի ջերմեռանդութեամբ չէ ծառայել նրան ինչպէս Ա՞յն, որ մինչև մոռացել է իւր ազգային պարտաւորութիւնները, որն որ շատ անդամ աւելին յիմարութիւն է համարուել։ Որ ժողովուրդ, որ ազգ կարողացաւ էնքան տէրանց ծառայել, չորս կողմի անթիւ հաւատոյ թշնամեաց հնազանդուելով, ու իւր ազգութիւնը պահպանել էնքան երկար ժամանակ։ Ուր է էն մեծ Ասորեստան, ո՞ւր Մարք, ո՞ւր Ա՞ղկաստան, ո՞ւր Եգիպտոս։ Որը նրանցից էս օրուան օրս կարող է հաւասարվել մեր ազգին. մի՞թէ մեր ազգի հաւատարմութիւնը չէր, որով կարողացաւ էսքան ժամանակ դիմանալ և տոկալ էնքան դժուարութեանց։

Ուրախ եմ հոգւով չափ, ուրախ։ Ասեց ու լռեց։ Լռութիւնը և խռովեալ դիմաց փոփոխումը ցոյց էին տալիս նրա հոգւոյ և սրտի մրմնջումը։

(Շարունակելի)

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Եւրոպացւոց գաղափարք Հայոց վերայ. — Հայոց վանառականական եւն յարաբերութիւնք ընդ Գաղղիոյ. — Դաչակրաց ժամանակ. — Լեւոն Զ. Լուսինեան վերջին Թագաւոր Հայոց, անցք նորին, հաշտասէր դեսպանութիւնն ընդ մէջ Գաղղիոյ եւ Անգղիոյ, եւ գերեզմանն. — Հայոց համար Գաղղիացւոց աշխատասիրութիւնքն. — Հայոց կենդանի լեզուն ի ճեմարանի Փարիզու. — Հայազգի ուսանողք։

Ամբողջ Եւրոպայի բոլոր ազգերը Հայոց ազգի վերաբերմամբ բաժանվում են երեք դասակարգի։ Առաջին դասակարգին պատկանում են այնպիսի ազգեր, որք՝ համարեա ամենեւին գաղափար չունին մեր ազգի վերայ եւ երբէք չեն ունեցել նորա հետ որեւիցէ պատմական յարաբերութիւններ, ինչպէս զոր օրինակ Սկանդինաւեան թերակղզու Սվէդացիք եւ Նորվէժցիք, Պորտուգալացիք, Զուիցերիացիք, Բելջիգացիք եւն։ Երկրորդ դասակարգին պատկանում են այն ազգերը, որք թէեւ լաւ ծանօթ են Հայոց ազգի հետ եւ ունեցել են նորա հետ կամ ի հնուց անտի եւ կամ համեմատաբար նորագոյն ժամանակներից ի վեր պատմական յարաբերութիւններ, բայց քաղաքական եւ կրօնական կրքերից դրդուած՝ միշտ ատել են եւ ատում են ու արհամարհում են մեզ, ինչպէս զօ. Քաթօլիկները, Յոյները եւ այլք։ Իսկ երրորդ դասակարգին պատկանում են այն ազգերը, որք կամ ունենալով Հայոց ազգի հետ պատմական յարաբերութիւններ եւ կամ շնորհիւ իւրեանց բարձր լուսաւորու-

թեան եւ աղնիւ ու սուրբ ընդհանուր մարդասիրութեան, սիրում են՝ յարգում են եւ համակրում են մեզ ինչպէս զօ. Անգղիացիք, Գաղղիացիք, Գերմանացիք եւլն։ Եւրոպական ազգերի այսպիսի բաժանմունքը, որը ունի իւր պատմական հնութիւնը, ստուգուեցաւ եւ աւելի ապացուցուեցաւ ներկայ Արեւելեան խնդրոյ առթիւ։ Առաջին դասակարգի ազգերի լրագիրները ամենեւին չխօսեցին Հայոց ազգի վերայ։ Երկրորդ դասակարգի ազգերի լրագիրները կամ նախանձոտ լռութիւն պահեցին եւ կամ խօսեցին միայն կեղծաւոր դիմակով, ինչպէս ասած է — «Համ նալն պալով, համ ալին»։ Երրորդ դասակարգի ազգերի լրագիրները ընդհակառակն աղնիւ մարդասիրութեան համակրութեամբ խօսեցին եւ խորհեցին Հայոց ազգի վերայ, ցանկալով սիրել եւ բարեւոքել նորա ներկայ քաղաքական վիճակը։

Մի կողմ թողնելով ներկայ քաղաքական յարաբերութիւնները, ես կամենում եմ այս անգամ խօսել երրորդ դասակարգի ազգերի մէջ նշանաւոր տեղ բռնող Ֆրանսիացիների առ Հայոց ազգ ունեցած պատմական համակրութեան վերայ։

Ինչպէս յայտնի է, Հայոց ազգը միջին դարերում, Խաչակրաց պատերազմների ժամանակ, սերտ յարաբերութիւններ վարեց, բացի ուրիշ ազգերից, Ֆրանսիայի հետ։ Այդ յարաբերութիւնները երեք տեսակ էին, — 1. առեւտրական, 2. քաղաքական եւ 3. ազգակցական։

1. Կիլիկիայի Ծոլեզերեայ քաղաքների Հայ վաճառականները այնպիսի ընդարձակ առուտուր բացին Ֆրանսիայի Ծոլեզերեայ քաղաքների հետ որ՝ Հայկական ապրանքները Ֆրանսիայում եւ Ֆրանսիական ապրանքները Կիլիկիայում սկսեցին նշանաւոր դեր խաղալ։ Կիլիկիայի մի քանի նաւահանգիստները ունէին առանձին թաղեր Ֆրանսիայի, ինչպէս եւ Վենետիկի եւ Ջենովայի հասարակապետութեանց եւ քանի մի երկիրների վաճառականների համար։ Այսպիսի ընդարձակ առեւտրական յարաբերութիւնները տեղիք տուին Ֆրանսիայի եւ Կիլիկիայի տէրութեանց վաճառականական փոխադարձ դաշնադրութիւններ հաստատել միմեանց մէջ, ինչպէս հաստատել էր Հայոց տէրութիւնը Վենետիկի եւ Ջենովայի հետ։ Մինչեւ անգամ Ռուբինեան թագաւորութեան անկումից յետոյ եւ Հայոց ազգի ընդհանուր տարաբախտութեան ժամանակ՝ շատ Հայ վաճառականներ շարունակում էին իւրեանց առեւտրական յարաբերութիւնները Ֆրանսիայի հետ, ինչպէս եւ Արեւմտեան Եւրոպայի հետ։ Այսպիսի պատմական երկարատեւ յարաբերութեամբք կարելի է բացատրել շատ Հայ վաճառականների նաեւ այժմեան ձգտումն դէպ ի Ֆրանսիան եւ սորա փոխադարձ համակրութիւնը առ նոսա։

2. Խաչակրաց պատերազմների ժամանակ, ինչպէս յայտնի է մեր ազգային եւ Ֆրանսիական ժամանակակից տարեգրութիւններից, Կիլիկիայի տէրութիւնը եւ Հայոց ազգը քաղաքական

սերտ յարաբերութիւններ ունեցան, ի միջի այլոց, Ֆրանսիայի հետ, օգնելով Խաչակիրներին զօրքով, պաշարեղէնով, ճանապարհով, եւն։ Այս առթիւ այդ ժամանակներում յաճախ պատահում էին դեսպանագնացութիւններ եւ թղթակցութիւններ մեր եւ Ֆրանսիայի տերութեանց մէջ։ Այդ խսկ քաղաքական սերտ յարաբերութիւնները յառաջ բերին նաեւ

3. Ազգակցական կապակցութիւն։ Ինչպէս յայտնի է՝ Ռուբինեան ցեղի թագաւորներից եւ իշխաններից շատերը խնամութիւն ունեցան Կիպրոս կղզուն տիրապետող Լուսինեան թագաւորական ցեղի իշխանների եւ իշխանուհիների հետ, որք մերձաւոր ազգականութիւն ունէին Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի եւ Անգլիայի արքայական ցեղերի հետ, որով հարկաւ խնամութիւն եւ ազգակցական կապակցութիւններ բացուեցան այդ ցեղերի եւ Ռուբինեանների մէջ։ Մինչեւ անգամ յիշեալ երկիրների թագաւորները գեղեցկադոյն զարդ էին համարում դնել իւրեանց արքայական շքեղ տիտղոսների մէջ եւ «Թագաւոր Հայոց կամ Թագաւոր Հայաստանի» վառաւոր տիտղոսը, որը աւանդութեամբ պահպանուել է մինչեւ այժմ Իտալիայի թագաւորի ընդարձակ տիտղոսի մէջ։ Բայց եւ յետոյ, հինգ դարու ընթացքում, թէեւ արդէն ընդմիջուեցան քաղաքական յարաբերութիւնները Հայաստանի եւ Ֆրանսիայի մէջ, Ֆրանսիան չէր դադարում սիրել եւ համակրել Հայոց ազգին։ Սոյն այս համակրութիւնը շարունակվում է մինչեւ այժմ, որոց ապացոյցներն են հետեւեալ հանգամանքները։

1. Մինչդեռ Հայաստանում բոլորովին անհետացել են կամ անհետանալու վերայ են իւր բազմաթիւ թագաւորների թանկագին եւ նուիրական շիրիմները, Ֆրանսիան, մտերիմ բարեկամի հոգացողութեամբ, պահպանում է Հայոց ազգի համար մի այդպիսի նուիրական շիրիմը։ Այդ է՝ Ռուբինեան Լեւոն Զ, տարաբախտ թագաւորի գերեզմանը։ Բայց, նախ քան թէ կենկարագրեմ այդ գերեզմանը, աւելորդ չեմ համարում յառաջ բերել այստեղ այդ Հայոց վերջին թագաւորի համառօտ պատմութիւնը։ Այս մինչեւ անգամ հարկաւոր է բացատրելու համար թէ՝ ի՞նչպէս պատահել է որ՝ Լեւոնը վախճանուել է Փարիզում։

Կիլիկիայի Հայոց թագաւորութեան վերջին թագաւորը, տարաբախտ Լեւոն Զ՝ իւր գահակալութեան բոլոր ժամանակը անցկացրեց մաքառելով Եգիպտոսի սուլթանների հետ՝ անձնազոհութեամբ եւ արիւնահեղ պատերազմներով պաշտպանելով իւր ազգի քաղաքական անկախութիւնը եւ գոյութիւնը։ 1371 թ. Եգիպտոսի տաճիկները ահագին բազմութեամբ յարձակուեցան Կիլիկիայի վերայ եւ աւերեցին եւ այրեցին շատ քաղաքներ, ինչպէս եւ Սիս մայրաքաղաքը։ Լեւոնը, որը անձնուիրութեամբ ներկայ էր պատերազմի մէջ, վէրք ստացաւ եւ ստիպուեցաւ խոյս տալ եւ ամրանալ մի անմատչելի լեռնոտ դղեակում, ուր եւ մնաց ծածուկ երկու տարի, ուստի ամենքը կարծում

էին թէ նա սպանուած էր պատերազմում։ Բայց, 1373 թ. երբ նորա կինը՝ Մարիամ թագուհին կամենում էր ամուսնանալ Բրունշվիգի Դուքս Օթոնի հետ, որը պիտի Հայոց թագաւոր նըստեր, Լեւոնը յանկարծ երեւեցաւ եւ խափանեց այդ գործը։ Եգիպտոսի սուլթանը իմանալով Լեւոնի երեւալը եւ կարծելով թէ՝ նա գուցէ այդ միջոցում պատերազմական պատրաստութիւն տեսած լինէր իւր ազգական Եւրոպացի թագաւորների օգնութեամբ՝ վերստին յարձակուեցաւ 1374 թ. Կիլիկիայի վերայ բազմաթիւ զօրքով եւ աւերեց բոլոր երկիրը։ Լեւոնը ստիպուեցաւ փակուիլ իւր կնոջ եւ միակ աղջկայ հետ մի պինդ ամրոցի մէջ, բայց լիննամնեայ պաշարմունքից յետոյ՝ հարկադրուած էր անձնատուր լինել իւր թշնամուն։ Այս ողբալի անցքը պատահեցաւ 1375 թ. եւ յարաբաստիկ Լեւոնը իւր ընտանիքի հետ գերի տարուեցաւ նախ Յերուսաղէմ եւ յետոյ Եգիպտոսի Կայիր*) քաղաքը, ուր եւ մնաց արգելուած վեց տարի։ Վերջապէս Կաստիլիայի (Սպանիայում) Յովհաննէս Ա, թագաւորի միջնորդութեամբ նա ազատութիւն ստացաւ 1381 թ. եւ գնաց իսկոյն Սպանիա իւր ազգականին եւ բարերարին շնորհակալութիւն յայտնելու համար եւ իւր թագաւորութեան վիճակի վերայ խորհելու համար։ Այն տեղ շատ քիչ մնալով՝ նա գնաց Հռոմ յուսալով օգնութիւն գտնել Պապից, բայց շուտով վերադարձաւ Սպանիա, ուր հետզհետէ եկաւ տէր Մադրիտ եւ Անգուժար քաղաքների։ Բայց եւ այս տեղ չկարողանալով գտնել մի դարման իւր խորտակած տէրութիւնը վերականգնելու համար, Լեւոնը երեք տարուց յետոյ գնաց Ֆրանսիա նոյն նպատակով։ Այստեղ Կարոլոս Զ, թագաւորը ընդունեց նորան ազգակցական սիրով եւ մեծ պատուով եւ յատկացրեց նորան Սէնդ-Ուան պալատը եւ արքունի գանձարանից տարեկան մեծ գումար դրամ ծախուց համար։ Լեւոնը, որ միշտ հառաչում էր իւր հայրենիքի թշուառ վիճակի վերայ, օգնութիւն խնդրեց Կարոլոսից, որը եւ խոստացաւ նա՝ նոյն միջոցին Անգղիայի հետ վարած պատերազմը վերջացնելուց յետոյ։ Ուստի տարաբախտ պանդուխտը ամեն կերպով աշխատում էր որ շուտով վերջանայ այդ պատերազմը, եւ բարեպատեհ միջոցներում յորդորում էր Կարոլոսին հաշտուիլ Անգղիայի հետ, բացատրելով թէ՝ Ֆրանսիայի եւ Անգղիայի հզօրութիւնը եւ բախտաւորութիւնը, այլ եւ Արեւելքի քրիստոնեաների փրկութիւնը եւ ապահովութիւնը կախուած են այդ երկու երկրի սերտ բարեկամութիւնից։ Համոզուելով այդ խօսքերով՝ եւ ինքն ուզելով վերջ տալ պատերազմին, Կարոլոսը պատուեց Լեւոնին վսեմ յանձնարարութեամբ — հաշտութեան միջնորդ լինել իւր եւ Անգղիայի թագաւոր Ռիչարդ Բ-ի մէջ։ Թագաւորիկ Լեւոնը՝ արծարծելով իւր սրտի մէջ փրկութեան յոյս, շտապեց գնաց Անգղիա, ուր խիստ համակրողական եւ պատուաւոր ըն-

(*) Դահիրէ։

դունելութիւն գտաւ թագաւորից, Պարլամէնտից եւ նոյն իսկ ամբողջ ժողովրդից։ Տէրութիւնը յարգեց թագաւոր - դէսպանի միջնորդութիւնը եւ դեսպաններ ուղարկեց Ֆրանսիա հաշտութեան պայմանները որոշելու համար, բայց Լեւոնի եւ Հայոց ազգի դառը անբախտութիւնից ցանկալի հաշտութիւնը չյաջողուեցաւ։

Վերադառնալով Անդղիայից՝ Լեւոնը մնաց Փարիզում կարճ ժամանակ եւ յետոյ դարձեալ գնաց Սպանիա միշտ միեւնոյն նպատակով՝ օգնութիւն գտնել։ Բայց տեսնելով որ՝ չկայ ոչ մի տեղ փրկութեան յոյս՝ կրկին վերադարձաւ Ֆրանսիա, ուր մնաց մինչեւ իւր մահը։ Ասում են թէ՝ այնուհետեւ անբախտ Լեւոնը իւր տխուր օրերը անցուցանում էր Սելեստինեան վանքի մատուռում, ուր առանձին սեղանի վերայ դարսելով իւր անբախտ արքայական ոսկի թագը, մի ձեռագիր Հայերէն պալատական Աստուածաշունչ եւ մի խաչ, աղօթում էր ջերմաջերմ՝ վշտակոծ սրտով։ Վերջապէս՝ արդէն լրիւ ըմպած համարելով իւր դառն բաժակը՝ նախախնամութիւնը կարեց նորա կեանքի թելը։ Լեւոնը վախճանուեցաւ Փարիզում 1393 թ. Նոյեմբերի 29-ին՝ եւ խիստ մեծաշուք հանդէսով թաղուեցաւ նոյն Սելեստինեան վանքի եկեղեցում։ Ֆրանսիայի ժամանակակից պատմագիր՝ արքեպիսկոպոս Յովհաննէս Մուվէնալ Ուրսինացին իւր գրած Կարոլոս Զ-րդի պատմութեան մէջ, երես 127, գրում է Լեւոնի մահուան մասին այսպէս։ «Թագաւորն Հայոց, որ բաւական երկար «ժամանակից ի վեր Ֆրանսիայումն էր, «առաքինի եւ բարի կեանքի տէր, ազ«նիւ (մարդ) եւ ջերմեռանդ քրիստոն«եայ, անցաւ կեանքից դէպ ի յաւիտե«նականութիւն։ Եւ դրուեցաւ գերեզ«մանի մէջ հագնուած բոլորովին սպի«տակ շորերով։ Եւ նորա թաղման ներ«կայ էին արքայազունք եւ իշխանք, եւ «մեծ բազմութիւն ժողովրդի։ Եւ էր «բաւական հարուստ կահ եւ կարասի«քով (այս ինքն՝ շարժական հարստու«թիւնով)։ Որովհետեւ երբ նա եկաւ, «բերեց մեծ հարստութիւններ, որը «քաժանեց չորս մասն։ Մէկը — մի հո«գեզաւակին կամ որդեգրին (ոմանք «թարգմանում են՝ ապօրինի զաւա«կին), որ նա ունէր։ Երկրորդը — «խեղճ ազքատներին։ Երրորդը — իւր «մերձաւորներին եւ սպասաւորներին։ «Եւ չորրորդը — իւր պալատի կառա«վարիչներին։ Եւ շատերը ցուցին մեծ «վիշտ նորա գեղեցիկ (առաքինի) «կեանքի եւ ազնիւ բարքի պատճա«ռով»*)։

Թէեւ սոյն ականատես տարեգիրը ոչ ինչ չէ յիշում, բայց ոմանք կարծում են, եւ շատ հաւանական է այս կարծիքը, թէ Լեւոնի գերեզմանաքարի վերայ, Սելեստինեան եկեղեցում, կար մի արձանագրութիւն Լատինական լեզուով, բայց որովհետեւ այդ վանքը

(*) Ահա յիշեալ տարեգրութեան վերնագիրը. Histoire de Charles VI, dès l'an MCCCLXXX (1380) jusques en l'an MCCCCXXII (1422), par Messire Jean Juvenal de Ursins, Paris MDCXIV (1614).

վաղուց խափանուած է, ես չկարողացայ ստուգել այս կարծիքը։

Լեւոնի մարմինը մնաց Սելեստինեան վանքում բաւական երկար ժամանակ. յետոյ փոխադրուած էր այն Պրդի-զ-Օգիւստէն (Petits Augustins) անունով թանգարանը, որտեղից՝ 1793 թուականի քաղաքական յեղափոխութեան (բէվոլիւսիոնի) պատճառով՝ ուրիշ շատ թագաւորների եւ արքայազունների մարմինների հետ փոխադրուեցաւ Փարիզից 10 ասպարէզ հեռու գտնուած Սէն-Դնի քաղաքի մայր եկեղեցւոյ մէջ, որ կոչվում է նոյնպէս Սէն-Դնի։ Այս հրաշալի եւ շատ մեծ տաճարի մէջ, ուր ամփոփուած են Ֆրանսիայի թագաւորների եւ թագաւորազունների մարմինները, հիանալի արձաններով զարդարուած գերեզմաններում գտնուում է եւ մեր թագաւոր Լեւոնի գերեզմանը։ Մտնելով եկեղեցւոյ մէջ՝ դէպ ի ձախ կողմ, աւագ սեղանին մօտ, փոքր մատուռում, պատուհանի տակ զետեղուած է այդ թանկագին գերեզմանը։ Սա յատակից բարձր է մի կանգուն եւ պատած է սպիտակ մարմարով։ Երեսի վերայ դրած է սեւ մարմարից լայն եւ տափարակ պատուանդան եւ նորա վերայ սպիտակ մարմարի արձան, որը ձեւացնում է պառկած մարդ։ Լեւոնը ներկայացնում է միջահասակ մարդ, գանգուր մազերով եւ խիստ կարճ եւ նուազ մօրուքով, երկու բաժանած կղակի վերայ. նա զգեցած է արքայական շորեր եւ վերարկու, գլխին ունի թագ։ Նորա ձախու ձեռքը հանգըստանում է կուրծքի վերայ. այդ ձեռքը հագած ունի ձեռնոց եւ մատները ժողոված բռնում է միւս ձեռնոցը. խակ աջ ձեռքը մեկնած է երկարութեամբ եւ բռնած ունի արքայական երկար գաւազան։ Այդ գաւազանը եւ ձեռքի երկու մասը կոտրել են Պրուսիացիք 1870 թ. պատերազմի ժամանակ, բայց կտորները մնացել են եւ դրած են գերեզմանի վերայ։ Սեւ մարմարեայ պատուանդանի երեք շրթունքի վերայ գրած կայ գոթիկական վայելչագրութեան տառերով եւ տիտղոսաւոր (համառօտած) բառերով հետեւեալ Ֆրանսերէն արձանագրութիւնը։

«Սի ժիսա տրէ նոբլ է էքսելլէտ պը-
«րենս Լիոն դը Լիւզինն քիա բուա լատին
«դիւ բուայեսմ դ'Արմէնի քի ըէգնէ լ'ամ
«ա Դիյս ա Պարի լը XXIX ժուր դը նո-
«վեբր լ'ան դը գրաս MCCC $\frac{XX}{IIII}$ է XIII.
«Պրիէ պուր լիւի»։

Որ հայերէն թարգմանութեամբ նշանակում է։

«Ասա հանգստանում է յոյժ ազնիւ եւ
«գերազանց իշխան Լեւոն Լուսինեան
«երբեմն թագաւոր Լաթինական թա-
«գաւորութեան Հայաստանի, որ յանձ-
«նեց հոգին Աստուծոյ Փարիզում ի 29րդ
«օրն Նոյեմբերի փրկչական ամի 1393։
«Աղօթեցէք վասն նորա»։

Սէն-Դնի եկեղեցւոյ ուղեցոյցը, որը պատմական հարուստ եւ ճիշտ տեղեկութիւններով բացատրում էր իւրաքանչիւր գերեզմանի պատմութիւնը, ասաց ինձ թէ՝ նախ՝ Ֆրանսիայի կանոնով այդ եկեղեցումը կարող են թաղուել միայն Ֆրանսիայի թագաւորները, այն եւս եթէ մեռած են Ֆրանսիայի

հոգի վերայ, ուրեմն Ֆրանսիացւոց ազգը մեծ պատիւ ցուցած է Լեւոնին նորա մարմինը ամփոփելով վերջապէս այդ տեղ. երկրորդ՝ թէ կայ աւանդութիւն՝ որ արձանի դէմքը շատ նման է ինքեան Լեւոնին։ Այժմ ի հարկէ շատ դժուար է սորուգել այս պատմական աւանդութիւնը։

2. Երկրորդ ապացոյցը Ֆրանսիայի սիրոյ եւ համակրութեան առ Հայոց ազգ է նորա ուսումնասիրութիւնը հայկական լեզուի եւ մատենագրութեան։ Ինչպէս յայտնի է, հարիւր տարուց աւելի է որ՝ Ֆրանսիան՝ մեծ գին եւ գիտական նշանակութիւն տալով մեր լեզուին եւ մատենագրութեան՝ առանձին իմն ուշադրութեամբ ուսումնասիրում է սոցա։ Այդ կարճ միջոցում քանից աւելի երեւելի հայագէտ Ֆրանսիացիք մեծ անուն հռչակեցին իւրեանց գիտնական շարադրութիւններով Հայոց մատենագրութեան եւ լեզուի վերայ. դոցա մէջ աւելի երեւելի են Սէն-Մարդէն, Լանգլուա, այժմ կենդանի Դիւլօրիէ, եւ այլք։ Համարեա մեր բոլոր երեւելի պատմագրութիւնները թարգմանել են ինքեանք Ֆրանսիացի հայագէտները իւրեանց մայրենի լեզուով հանդերձ գիտնական քննութիւններով եւ ծանօթութիւններով։ Այս կողմից գուցէ Ֆրանսիան աւելի հարուստ լինի եւ առաջին միւս Եւրոպական երկիրների մէջ։ Ֆրանսիական մատենագրութեան մէջ մի առանձին եւ բաւական հարուստ ճիւղ կազմումեն ճանապարհորդութիւնները ի Հայաստան, որը միշտ գրաւել է Ֆրանսիացւոց ուշադրութիւնը, ընդարձակ Հայաստանի համարեա բոլոր նահանգները մանրամասնօրէն ուսումնասիրուած են եւ նկարագրուած աշխարհագրական, պատմական, քաղաքական, կրօնական, գիւղատնտեսական, բնական հարստութեանց, բարուց եւ վարուց, եւն, եւն, կողմերից, լի զանազան աշխարհագրական քարտէզներով, նկարներով, արձանագրութիւններով, եւն։ Տարաբախտաբար ներկայ հայկական դպրութիւնը մեր մէջ դեռ եւս այնպէս թոյլ է՝ որ մենք Հայերս անգամ գաղափար չունինք այս բոլոր թանկագին գանձերի վերայ, որք այնպիսի զգուշութեամբ ամփոփուած են Ֆրանսիայի եւ այլ Եւրոպական երկիրների գիտութեանց շտեմարաններում։

3. Այսպիսի բարձր գաղափարից Հայոց լեզուի եւ մատենագրութեան վերայ, այլ նաեւ քաղաքական նպատակներից համոզուած՝ Ֆրանսիան ի վաղուց սկսել է պաշտօնապէս ուսանել մեր լեզուն ոչ տոր տեղ տալով նորա արեւելեան լեզուների շարքում։ Փարիզում կայ մի բարձր դասակարգի ճեմարան կենդանի արեւելեան լեզուների համար, ուր Տաճկական, պարսկական, Ժապոնական, Չինական, եւն, եւն, կենդանի արեւելեան լեզուների շարքում ուսուցանվումէ եւ Հայկական հին կամ գրոց լեզուն։ Այս աւելի մեծ պատիւ է մեր գրոց լեզուի համար, վասն զի թէեւ այժմ Հայոց ազգը չէ խօսում այդ ոճով, բայց Ֆրանսիական գիտութիւնը համարումէ նորան այնու ամենայնիւ կենդանի լեզու, իբրեւ լեզու մի քանի միլիոն կենդանի ազգի։ Այժմ այդ ճեմա-

բանում Հայերէն լեզուի ուսուցչապետն (պրոֆէսսոր) է գիտնական հայագէտ Եդուարդ Դիւլորիէն։ Սորա անունը արդէն բաւական հռչակուած է Հայոց ուսումնական դասակարգի եւ գիտնական մատենագրութեան մէջ։ Պէտք է վկայել որ՝ Պ. Դիւլորիէն դարմանալի հմտութեամբ գիտէ մեր գրոց լեզուն, թէեւ տարաբախտաբար սորա հայկական հնչմունքը չէ այնքան յաջողակ, որքան կարող էր ունենալ մի օտարական։ Բաց ի լեզուագիտութիւնից՝ Պ. Դիւլորիէն հարուստ մանրամասնութիւններով տեղեակ է Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան։ Սա ունի նշանաւոր աշխատասիրութիւններ մեր մատենագրութեան մասին. այժմ իսկ պատրաստուում է հրատարակել Ստեփաննոս Ասողիկի պատմութեան Ֆրանսերէն թարգմանութիւնը հանդերձ գիտնական ծանօթութիւններով։

Այժմ ճեմարանում կան չորս Ֆրանսիացի ուսանողներ, որք ուսանումեն հայերէն լեզուն։ Սոցանից մէկը դեռ երիտասարդ է եւ ստանում է արքունի թոշակ. միւս երեքը թէեւ արդէն աւարտած են իւրեանց ուսմունքը եւ ունեն այլ եւ այլ գիտնական պաշտօններ, մինը մինչեւ անգամ արդէն ալեզարդ է, բայց այնու ամենայնիւ շարունակում են լսել Պ. Դիւլորիէի Հայկական դասերը։ Սա այս տարի թարգմանում է բերանայի Ագաթանգեղոս եւ Եղիշէ, տալով հարկաւոր բացատրութիւններ լեզուի, պատմութեան, եւ այլ հարցերի մասին։ Հայերը, տարաբախտաբար մինչեւ այժմ ոչինչ օգուտ չեն քաղել այս ճեմարանից. այստեղ երբէք չէ եղած մի Հայ երիտասարդ, որը պաշտօնապէս ուսանող դառնալով սոյն ճեմարանում՝ ուսումնասիրէր այլ եւ այլ արեւելեան լեզուները, որքան գիտնական նպատակով Հայոց լեզուի եւ մատենագրութեան վերաբերմամբ, նոյնչափ գոնեա գործնական նպատակով, որով մեծ ասպարէզ կարող էր բանալ իւր առաջեւ դեսպանական եւ այլ պաշտօններով։

4. Բաց ի յիշեալ ճեմարանից, Ֆրանսիայի ուսումնարանները միշտ սիրով ընդունել են Հայազգի ուսանողներ. ի հարկէ այդ չէ բացառութիւն միայն մեզ համար. նոքա լի են ամենայն ազգերի, մինչեւ անգամ Ամերիկայի, Չինաստանի, Ժապոնայի երիտասարդներով։ Միւս կողմից եւ Հայ ուսանողները միշտ սիրով ձգտել են դէպ ի Ֆրանսիայի գիտութիւնը եւ ուսումնարանները. նոցա մէջ աւելի բազմաթիւ են եղել Տաճկաստանցի Հայ երիտասարդները։ Տարաբախտաբար՝ մեր երիտասարդներից ոմանք՝ ի մանկութենէ չըստանալով կանոնաւոր կրթութիւն՝ չեն կարողացել արժանապէս օգուտ քաղել Փարիզի ուսումնարաններից՝ եւ անձնատուր լինելով աշխարհային վայելչութեանց լայնածաւալ հորձանքներին՝ տասնաւոր տարիներ ժամանակ են եղել՝ երբեմն կրելով չարաչար ազգատութիւն։ Ռուսաստանից եկած Հայ երիտասարդների վերաբերմամբ փորձը ցուցանում է որ՝ միայն նոքա քաղել են եւ քաղում են բոլոր օգուտը Փարիզի բարձրակարգ ուսումնարաններից՝ որք նա-

իրենթացաբար ստացել են կանոնաւոր կրթութիւն եւ աւարտել են իւրեանց ուսմունքը Կոլկասեան փոխարքայութեան կամ Ռուսսիայի մայրաքաղաքների միջնակարգ եւ բարձրաստիճան ուսումնարաններում։

5. Վերջապէս՝ Ֆրանսիան միշտ, որպէս եւ այժմ իսկ, մեծ նշանակութիւն է տուել իւր առեւտրական յարաբերութիւններին Հայ վաճառականների հետ եւ միշտ աշխատել է իրախուսել եւ ընդարձակել այդ յարաբերութիւնները։ Միւս կողմից՝ եւ ինքեանք Հայ վաճառականները միշտ սիրել են յարաբերութիւններ ունենալ Ֆրանսիայի հետ՝ ոչ միայն Կ. Պոլսոյ Հայերը, այլ եւ անդրկովկասեան գաւառների Հայերը ցոյց են տուել միշտ այդ ձգտումն։ Այդ վաճառականական յարաբերութեանց կենդրոնները եղել են եւ են՝ Փարիզ, Լիոն, եւ Մանսաւանդ Մարսիլիա։ Սոյն քաղաքում ներկայ դարուս 30 — 40 թուականներում բաւական մեծ գործեր էին կատարում Ռուսիոյ Հայ վաճառականները, որոց մէջ աւելի նշանաւոր տեղ բռնում էին Աղուլիսեցիք, բայց յետոյ բաւական համառօտուեցան այդ գործերը։ Այժմ ահա մի քանի տարի է որ Հայ վաճառականները վերստին սկսել են ընդարձակել իւրեանց յարաբերութիւնները Մարսիլիայի հետ, ուր մի Հայկական ընկերութիւն ունի արդէն իւր սեփական նաւը, որը ման է գալի Միջերկրական եւ Սեւ ծովերի վերայ, հասնելով մինչեւ Փոթի։ Այս ի հարկէ շատ ուրախալի է, վասն զի Հայերը՝ մինչպէս մի ժամանակ մեծ վաճառականական դեր խաղալով Բաբիլոնի եւ այլ ասիական մեծամեծ առեւտրական հրապարակների վերայ, իբրեւ գլխաւոր միջնորդ Ասիայի եւ Եւրոպայի վաճառականական յարաբերութեանց մէջ, կարողացան բարձրացնել եւ փառաւորել իւրեանց ազգի եւ Հայաստանի քաղաքական պատիւը եւ նիւթական յաջողութիւնը, նոյնպէս եւ այժմ նոքա միայն այդ ճանապարհով կարող են հասնել նոյն նպատակին։

* * *

Ի ¹/₁₂ Մարտ 1877

Ի Փարիզ.

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐՆԵՐ.

Գանձակեցի մեր եղբայրներէն Մեծ. Պարոնայք Աղեքսանդր Աղաջանեան Խաչատրեանց, Ասլան Տէր-Վարդանեանց, Աւետիս Մալեանց, Խաչատուր Մկրտումեանց, Մկրտիչ Մնացականեանց եւ Ներսէս Աբրահամեանց Տէր-Ներսէսեանց՝ յանուն եւ ի պէտս Տաճարի Ս. Էջմիածնի՝ երկու շուրջառ, երեք փորուրար, մի զոյգ թեւնոց (բաղպան ժամարարի), երկու հատուած շուրջառացու (որոցմէ Եպիսկոպոսական ձեռնադրութեան Խարտաւիլակի համար մի շապիկ եւ սարկաւագի մի ուրար շինուեցաւ) եւ մի միջակաղիր գորգ նուիրեցին ի ձեռն Հոգեզգօն Գրիգոր Եպիսկոպոսի Մուշեղեանց։

Գովելով յիշեալ պարոնայից բարեպաշտութիւնը՝ Ամենագրոյս միջոցաւ՝ եւ շնորհակալութեամբ կհրատարակեմք ի տեղեկութիւն մեր սիրելի Ազգայնոց։

Ցառաջակայ ուսումնական շրջանում ի Ս. Գէորգեան ճեմարան ընդունուելիք աշակերտաց վերաբերեալ հետագայ հրահանգը ի կողմանէ ճեմարանական Վարչութեան կը հրատարակուի, որոյ առանձին տպուած օրինակները պէտք եղած տեղեաց եւս պիտի խրկուին ի կարեւոր հրահանգութիւն։

ՀՐԱՀԱՆԳ
ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱԶԱԿԵՐՏԱՑ ՈՐՔ ԿԱՄԻՑԻՆ ՄՏԱՆԵԼ ՅԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՍ

Ի 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1877 ՏԱՐԻՈՅՍ։

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց եւ ըստ սահմանելոյ ուսումնական ժողովոյ ճեմարանիս՝ Ծանուցանի՝ որոյ անին է, զի

Ա. Ցառաջիկայ ուսումնական ամի ճեմարանիս, որոյ սկիզբն է ի 1 Սեպտեմբերի, բացցի եւ հինգերորդ դասարան Դպրանոցական բաժնի սորա։

Բ. Միայն յառաջին դասարանն ընկալեալ լիցին նորամուտ աշակերտք։

Գ. Ընտրելի են պատանիք առաւելապէս յայնպիսի բազմամարդ հայաբնակ կողմանց՝ յորս չեւ եւս գտանին դպրոցք կանոնաւորք, ոչ չորեքդասեան հոգեւոր ուսումնարանք եւ ոչ երկդասեան դպրոցք ծխականք լիովին բարեկարգեալք։

Դ. Ընտրելիքն պարտին լինել որբք եւ կամ որդիք աղքատ եւ չքաւոր ծնողաց։

Ե. Ամք հասակի պատանեաց ցանկացողաց մտանել յառաջին դասարան ճեմարանիս պարտին լինել ոչ պակաս քան զ12, եւ ոչ աւելի քան զ14։

Զ. Պարտ է նոցա քաջառողջս լինել մարմնով, եւ ունել զընատուր ուշիմութիւն, զսրամտութիւն, զհլութիւն եւ զպարկեշտութիւն։

Է. Ուսմունքն զորոց հարցաքննելի են աշակերտք ցանկացողք մտանել յառաջին դասարան ճեմարանիս՝ են

1.) ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. այս ինքն

ա. Գլխաւոր աղօթք (ի ժամագրոց) ուսեալք ի բերան՝ հանդերձ թարգմանութեամբ նոցին յաշխարհիկ բարբառ։

բ. Պատմութիւն հին եւ նոր կտակարանաց համառօտ։

գ. Սկզբունք Քրիստոնէական վարդապետութեան։

2.) ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ.

ա. Գրաւարժ ընթերցումն հայերէն լեզուի՝ հանդերձ թարգմանութեամբ բանից սրբոյ աւետարանին ի գրոց լեզուէ յաշխարհիկն։

բ. Հայերէն քերականութեան առաջին մասն՝ հանդերձ վերլուծութեամբ մասանց բանի։

3.) ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Զորեքին գլխաւոր գործողութիւնք թուաբանութեան եւ փորձք նոցին։

4.) ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ.

Վարժ ընթերցանութիւն՝ հանդերձ հայերէն թարգմանութեամբ սովորական բառից եւ խօսից։

5.) ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ։

Ը. Ցանկացողքն մտանել ի ճեմարանս պարտին ունել երիս վկայագիրս. 1, զարձանագրական (մետրիքական) վկա-

յագիր ծննդեան եւ մկրտութեան. 2, զվկայագիր ուսեալ գոլոյ զուսմունսն ի վեր այսր նշանակեալս, եւ 3, զվկայական բժշկի՝ զի հանեալ են զծաղիկ բընական, կամ ընկալեալ զպատուաստ ծաղկին։

Թ. Հոգեւոր տեղական իշխանութիւնք պարտին ստուգել զվկայագիրսն եւ ստորագրութեամբ իւրեանց հաստատել։

Ժ. Ընտրեալքն յաշակերտութիւն ձեմարանիս՝ պարտին գտանիլ ի սուրբ էջմիածին գէթ երկուք եօթնեկօք յառաջ քան զսկզբնաւորութիւն տարեկան դասաւանդութեանց, այսինքն ի 15 օրէ Օգոստոսի մինչեւ ց20։

ԺԱ. Աշակերտ ոք որ գայցէ ի քաղաքաց կամ ի գիւղօրէից եղելոց արտաքոյ Արարատեան նահանգիս կամ վիճակին Երեւանի, պարտի բերել յաւանդ ռուբլիս ԽԱՆ ԵՒ ՀԻՆԳ կամ աւելի՝ ըստ հեռաւորութեան վայրացն, որպէս զի եթէ հարկ լիցի դառնալ նմա ի հայրենիսն՝ մի ծանրասցին ծախք ճանապարհին ի վերայ ձեմարանիս։ Եթէ աշակերտն այն կացցէ մնասցէ ի ձեմարանի ասա մինչեւ ցաւարտ ուսումնական ընթացիցն, գումարն այն յանձնի նմա ամբողջ յերան ի ձեմարանէս։

ԺԲ. Եթէ նորամուտ աշակերտ ոք հարցաքննեալ՝ ի ձեմարանիս՝ ոչ ունիցի զպայմանսն ի վեր այսր նշանակեալս, դարձուցանի յետս ծախիւք առաքողացն զնա։

ԺԳ. Որք միանգամ ցանկանայցեն մտանել յաշակերտութիւն ձեմարանիս սրբոյ էջմիածնի, պարտաւորին ոչ միայն ճշգիւ պահել զկանոնս սորա, այլ եւ աւարտել ի սմին զվեցամեայ ընթացս ուսմանցն սահմանելոց։ Իսկ եթէ ոք յաշակերտաց մտաբերիցէ ի բաց գնալ ասասի՝ մինչչեւ աւարտեալ զընթացսն, եւ այն ոչ ի պատճառս անբուժելի հիւանդութեան իրիք կամ տկարութեան, եւ ոչ վասն այլ ինչ կարեւոր եւ ծանր պատճառի, այլ յինքնայօժար կամաց, կամ ըստ հաճոյից ծնողացն եւ ազգականաց՝ — պարտաւորի վճարել ձեմարանիս ռուբլիս Հարիւր ԵՒ յիսուն վասն միոյ միոյ ամի զոր կացեալ լցէ ի սմա, իբրեւ ի հատուցումն փոխարինի սննդեան եւ խնամոց յորս վայելեաց, եւ ինքնակամ հրաժարեալ ասասի՝ թերակատար եթող յիւրմէ կողմանէ զդաստիարակութիւն իւր եւ զհրահանգսն, եւ ի դերեւ եհան զակնկալութիւն հիմնադրի ձեմարանիս ի ծախուցն եղելոց յիւր վերայ։

ԺԴ. Զժամանակ ամառնային աւուրց հանգստեան անցուցանեն աշակերտք ի ձեմարանի ասա — կամ յամարանոցի սորա (յորժամ պատրաստեսցի)՝ — պարապելով ի թեթեւագոյն վարժս ուսմանց եւ ընթերցանութեան։ — Միայն աշակերտաց Զորրորդի դասարանին, որք գոլութեամբ աւարտիցեն ի նմին զուսմունսն (յամն երիս կամ չորս)՝ հրաման լինի չուել ի հայրենիս իւրեանց յետ տարեկան հարցաքննութեանց՝ երկամսեայ ժամանակաւ, այսինքն ի 5 օրէ յունիսի ց15 Օգոստոսի՝ ծախիւք ծնողացն կամ առաքողաց զնոսա։

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՂՔԱՏԱՆՈՅԻՆ
ՀԱՅՈՑ ՄՈՍԿՎԱՅԻ

Մոսկվայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանն անցեալ տարուայ համար տարեկան հաշիւը յանուն Վ.Հ. Հայրապետի Ազգիս ներկայացուցած լինելով, յետագայ կարեւոր մասերը կը գրեմք եւ կհրատարակեմք ի տեղեկութիւն Ազգայնոց մերոց։

«Նախ՝ յընթացս 1876 ամի ընդ լիաթոշակ խնամարկութեամբ Աղքատանոցին դտանէին անծինք 9 այրիք թուշմալեան, փիրատովեան հանդերձ երկոքումբք դստերօք, Խուպիկեանք, Նազարեան, Գուդաճանեան, Անարելեան եւ Սախարեան։ Բաց յայսմանէ ըստ նշանակելոյ Խորհրդանոցին ամիս յամսոյ տուեալ լինէին յարկեղէ Որբանոցին նպաստաղրամք այրեաց Սաարրէկովի, Պէպուրովի, Խոնայեվի, Մարիամու Տէր Մովսիսեան եւ հայ Մուրատովի ընդ ամենայն 7 անծանց ըստ չափու արդեանց Որբանոցին եւ պայմանի կենաց իւրաքանչիւրոց վերոյիշեալ անծանց։ Որոց եւ տուեալ է յընթացս տարւոյն 790 ռուբլի, յորոց 90 ռուբլին է ի գումարաց տուեալց արկեղ Որբանոցին վասն այսր նպատակի ի զլխաւոր եւ յանփոփոխ Անդամոց Խորհրդարանին։ Նոյնպէս սակաւաքանակ գումար ինչ տուաւ այրւոյն Սախարեանց վասն բնակելոյ նորա ի քաղաքին նախ քան զընդունիլն նորա յՈրբանոց։ Ցանցելում ամի երկուս սանունս ունէր Որբանոցն. յորոց մին ուսանողն Համալսարանին Մոսկվայի Տէր Գասպարեանց, որ յընթացս տարւոյն ընկալաւ ռուբլիս արծաթոյ 90, որ արդ աւարտեալ է զընթացս ուսմանն, եւ երկրորդ՝ աշակերտուհի յերրորդ մարզարանին Օրիորդաց Սերբերեաքով, որում տուեալ է յընթացս տարւոյն ի հաշիւ վարձուց մարզարանին եւ ուսումնական պիտոյից 110 ռուբլի. իսկ բովանդակ թիւ խնամարկելոցն յՈրբանոցին, որք ամիս յամսոյ ըստ նշանակելոյ Խորհրդարանին ընդունին նպաստս հանդերձ սանուր հոգիք 18։

Երկրորդ՝ հաշիւն արկեղ Աղքատանոցին վասն անցելոյ 1876 ամի հետեւեալ կարգաւ է։

	Ռ.	Կ.
Առ 1 Յունվարի 1876 ամի մնացեալ էր յարկեղ Աղքատանոցին տոկոսաբեր թղթովք	55707	75
Յայսմ գումարէ բերին տարեկան շահս ըստ 4°/₀ 49600 է		
« 5°/₀ 6107 75 է		
Թղթադրամովք . .	172	
		55879 75

ԼՍՈՒ ՍՄԻՆ ՀԱՍՈՒՑԵԼԻՆ ՅԸՆԹԱՑՍ ՊԱՐՏՈՅՆ.

Ի շահարերութենէ դրամագլխոյն	2515	7
Ի հանգանակելոցն յաւուր տօնի Ծննդեան Փրկչին եւ Յարութեան եւ ըստ մատենի նուիրատուութեան	520	78
Ցանգամոց Խորհրդարանին ի ռոճիկ քարտուղարի վասն 1875 եւ 1876 ամաց	240	
Ի զլխաւոր եւ յանփոփոխ Անդամոց Խորհրդարանին եւ վասն տալոյ զլրացուցիչ նպաստ Տէր Մովսէսեանի եւ Պէպուրովի հինգ հինգ ռուբլիս իւրաքանչիւրումն . .	120	
Ի պաշտօնաթող կապիտան Խէրոտինովէ կը տակեալն յօգուտ Որբանոցին ի մօրէն իւրմէ յաղնուուհի Խերոտինովէ անընդհատ շահարեր 4°/₀ տոմսակ մի՝ գրեալ յանուն Խորհրդանոցի Աղ-

քաւանոցին արժողութեամբ	500			
Յանփոփոխ Անդամոց Խորհրդարանին ի Լիանոզովէ փոխարինարար առեալն վասն Աղքատանոցին	578	64		
Ընդ ամենայն մուտք			3674	49
Իսկ հանդերձ դրամագլխով . .			59554	24

Տարեկան ծախք եղեալ են վասն Աղքատանոցին.

Վասն վառելեաց, ճրագի, նորոգութեան եւ ապահովութեան շինուածոյ Աղքատանոցին, մաքրելոյ զծխնելոյզս եւ զարտաքնոցս	796	8		
Ի սնունդ խնամարկելոց եւ ծառայից . . .	944	85		
Ի փոխել զանցագիրս խնամարկելոց . . .	10	70		
Վասն պահարանի ի պէտս Խորհրդանոցին եւ վասն սրբելոյ եւ ուղղելոյ զժամացոյցն	19	30		
Ռոճիկ քարտուղարի Խորհրդանոցին, վասն գրբենեայ Խորհրդանոցին, դիւանական պարագայից, հրատարակութեանց առ ի հրաւիրել զընդհանուր ժողով եւ վասն մանր ծախուց	147			
			1917	91
Նպաստ եղեալ արտաքոյ Աղքատանոցին				
Ամսականք ընդ ամենայն յընթացս բովանդակ տարւոյն . .	790			
Միանուագ օժանդակութիւն .	10			
			800	
Ուսանող Տէր Գասպարեանցի եւ աշակերտուհի Սերեպրեաքովի .	200			
			1000	
Անփոփոխ Անդամոյ Խորհրդանոցին Լիանոզովի զընկալեալն ի նմանէ փոխարինարար . . .			578	64
Ընդ ամենայն ծախք եղեալ են			3296	55

Մնաց առ մին Յունվարի 1877 ամի յարկեղ Աղքատանոցին:

Տոկոսաբեր թղթովք	56007	75		
Թղթադրամովք եւ մանրադրամովք	249	94		
			56257	69

Երրորդ՝ առաջարկեալս այս հաշիւ հանդերձ մնացեալովք առ 1 Յունվարի 1877 ամի տոկոսաբեր թղթովք (արժեթոմսիք) եւ այլովք վկայագրովք, ի վերայ հիման 10որդ յօդուածոյ կանոնաց՝ սահմանելոց յաղագս կառավարութեան Աղքատանոցին, մատուցաւ ի վերաքննութիւն հասարակութեան Հայոց Մոսկվայի յընդհանուր ժողովի նորին ի 27 անցելոյ Փետրուարի, որ եւ յետ քննելոյ զայն հաշիւ՝ ընդ ձեռն ընտրելոցն ի միջոյ հասարակութեան երից անդամոց եւ յետ ստուգելոյ զհաշիւն հանդերձ վկայագրովք՝ եղիւ զայն ընտ ամենայն մասանց ուղիղ եւ զդրամագլուխս Աղքատանոցին առձեռն պատրաստս, որոյ վասն իսկ կայացաւ եզրակացութիւն ժողովոյն, ստորագրեալ յամենից ներկայ գտելոց ի նմին ժողովի Անդամոց հասարակութեան, եւ

Չորրորդ՝ յառաջակայ ամին աւարտի սահմանադրեալն ի կանոնաց միջոց պարապմանց ի Խորհրդանոցին Անդամոց նորին պատուաւոր քաղաքացւոյ Փանեանի, զորմէ Խորհրդանոցն առաջարկեալ էր ընդհանուր ժողովոյ Հայազգի հասարակութեան Մոսկվայի, որ միաձայն հաւանութեամբ ընտրեաց յանդամակցութիւն Խորհրդանոցին զնոյն իսկ զՓանեան այլ եւս երկամեայ ժամանակաւ այս երրորդ անգամ եւ հաստատեաց զնա յայնմ կոչման իւրովն եզրակացութեամբ կայացելով ի 27 անցելոյ փետրուարի:

ԱՍՏՐԱԽԱՆԷՆ·

Խմբագրոթեան Երբեք Ամսագրոյ·

Աստրախանցի Հայազգի Յարութիւն Գէորգեան Պ· Թելէթեանց ի յիշատակ հոգւոյ հարազատ քեռ իւրոյ հանգուցեալ Տիկին Մարիամու Գէորգեան ըստ առն Բաբաթեանց՝ առաչի արար Հոգաբարձութեան Հոգեւոր ծխական երկուց սեռից Դպրոցաց զմի հարիւր մի ռուբլի քսան եւ վեց կոպէկ դրամս, ի նպաստ մտաւոր զարգացման միոյ չքաւոր աշակերտուհւոյ, Հոգաբարձութիւնս համաձայն կամաց նուիրատուի զմի հարիւր ռուբլին էարկ մշտնջենաւոր ժամանակաւ յԱստրախանայ Քաղաքային հասարակական դրամատունն եւ ընկալաւ զմի դրամատումակ զրեալ ի 18 Մարտի տարւոյս համարաւ 657, զումարաւ մի հարիւր ռուբլի, զոր եւ գրեաց ի մուտս դրամական մատենի ընդ յօդուածով 25, կարգաւորելով զտարեկան տոկոսիս այնր զումարի գործադրել համաձայն ցանկութեան Պ· Թելէթեանցի: Ջայսմանէ ծանուցանելով Խմբագրութեանդ խոնարհաբար խնդրէ Հոգաբարձութիւնս Դպրոցաց՝ ի ցոյց երախտագիտական զգացմանց իւրոց եւ գոհունակութեան, հրատարակել զազգուտ նուիրագործութենէ Պ· Թելէթեանցի յէջս Արարատ ամսագրոյ յընդհանուր տեղեկութիւն բարեսէր եւ ազգասէր համազգայնոց:

Հոգաբարձուք Յովսէփ Ա· քահանայ Բունիաթեանց
Սիմէօն Պողոսեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Մեքայէլ Բուրջալեանց·

Համար 17,
Ի 14 Ապրիլի 1877 թ·
ՅԱՊՐԻԼԻԱՆ·

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՒ
Ս· ՍԱՆԴԽՏԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ
ՇԱՄԱԽԻՈՅ·

Խմբագրոթեան Երբեք Ամսագրոյ·

Շամախւոյ Օրիորդական Վարժարանի Հոգաբարձուքս ուղարկելով Խմբագրութեանդ 1876 թուականում յիշեալ վարժարանի համար եղած մուտքի եւ ծախքի հաշուեցուցակը, Ընկերութեանս Անդամոց, Խնամակալուհեաց, ուսուցչաց, ուսանողուհեաց եւ ուսանելի առարկայից ցուցակի հետ միասին, խոնարհաբար խնդրում ենք Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակել ի գիտութիւն Ազգայնոց:

Մուտք·

1876 թուականի Յունվարի 1 ին մնացել է վարժարանին պատկանեալ զումար	2113	65
Քսան ու մէկ Անդամների տարեկան տուրք	260	
Տասն եւ չորս Խնամակալուհեաց տարեկան տուրք	70	
Ծաղկազարդի օրը ժողոված դրամակադրամ	11	8
Բարեսէր անձինքներից ստացած նուիրադրամք	26	
Աշակերտուհիներից թոշակադրամք	185	55
Լատերիայի խաղարկութիւնից աշակերտուհեաց ձեռագործների . . .	70	88
Վարժարանի մայր զումարաց տոկոսադրամք	277	50
Գումարն է	3014	44

Ծախք·

Վարժուհւոյ եւ Ուսուցչաց ռոճիկ 1876 թուի համար	559	24
Նոյն թուականի համար ծառայի վարձ	22	
Վարժուհւոյ եւ Ուսուցչի պարգեւատրութիւն	24	50

Տան վարձ 1876 թ. համար, ուր զետեղվում է դպրոցն	159	96
Վառելափայտի համար	31	30
Ջեռադործութեան թելի եւ զանազան մանրահասն ծախք	55	52
Գումարն է	812	52

Մուտք	3014	44
Ծախք	812	52
Մնաց զանձապահի մօտ	2201	92

Դասարանները է՝ նրանց մէջ աւանդված առարկաները.

Ա. Դասատուն. — Սորա մէջ աւանդվում են կրօն — Հին եւ Նոր Կտակարանից. Քերականութեան սկզբունք առանց ձեռնարկի. Հայոց Պատմութիւն, եւ լեզու, Ռ. լեզու. Թուաբանութիւն. Աղդ. եւ Եկեղ. երգեցողութիւն. Հ. եւ Ռ. վայելչագրութիւն եւ ձեռագործութիւն: Սորա մէջ գտնվում են 3 Ուսուցիչ, 16 թոշակաւորք, եւ երկու ծրիաթոշակք, ընդ ամենը 18:

Նախապատրաստական դասատուն. — Սորա մէջ աւանդվում են Հայոց լեզու, Ռ. լեզու. Հ. եւ Ռ. վայելչագրութիւն, Երգեցողութիւն եւ Ձեռագործութիւն. սորա մէջ գտնվում են, 1 Ուս. 29 թոշակաւորք եւ 8 ծրիաթոշակք. ընդամենը 37:

Անփոփոխ Անդամք.

1, Կարապետ Քալանթարեանց. 2, Սամուէլ Բաղբերեանց. 3, Մովսէս Աշուղեանց. 4, Յովհաննէս Միրզաբէկեանց. 5, Աբրահամ Գասպարեանց. 6, Յովհաննէս Խալափեանց. 7, Խաչատուր բէկ-Եղիազարեանց:

Տարեկան Անդամք.

1, Անդրէաս Արքեպիսկոպոս. 2, Սահակ Վարդապետ. 3, Պետրոս բէկ Տէր-Մարկոսեանց. 4, Միքայէլ Ղարաղաշեանց. 5, Պօղոս Ներսէսեանց. 6, Գրիգոր Դիլտարեանց. 7, Գէորգ Կաճկաճեանց. 8, Յարութիւն Տէր-Եսայեանց. 9, Հայրապետ Ղուկասեանց. 10, Յովհաննէս Իւղրաշեանց. 11, Ջաւատ Տէր-Ստեփանեանց. 12, Յարութիւն Տէր-Սարգսեանց. 13, Աստուածատուր Զախարեանց. 14, Բաղդասար Նազարեանց. 15, Ներսէս Տէր-Ներսէսեանց. 16, Պետրոս Քէշիշ-օղլի. 17, Սահակ բէկ Սերեբրակեանց. 18, Պատել Շեմիրեան Մելիք-Բէգլարեանց. 19, Յովսէփ Մելիք-Բէկլեարեանց. 20, Գրիգոր Այվազեանց. 21, Գէորգ Միրզաբէկեանց. 22, Թովմաս Ամիրեանց. 23, Գէորգի խան Տէր Յարութիւնեանց. 24, Ջհանկիր Միրզաբէկեանց. 25, Թադէոս Բահ. Բուդաղեանց, 26, Յակոբ բէկ Նիկիտեանց. 27, Բժիշկ Ամիրեանց:

Լոնամակալ-Հիւ.

1, Մարդարիտ Զօհրապեանց. 2, Ոսկի Կաճկաճեանց. 3, Թադուհի Նազարեանց. 4. Խանում Խալափեանց. 5, Կատարինէ Ներսէսեանց. 6, Մարիամ Նիկիտեանց. 7, Զամբաղ Քալանթարեանց. 8, Մարիամ Իւղրաշեանց. 9, Մարգարիտ Ավշարեանց. 10, Մարիամ Աշուղեանց. 11, Մարիամ Տէր Մարկոսեանց. 12, Խանում Լազարեանց. 13, Ովսաննա Եղիազարեանց. 14, Մարիամ Լալայեանց. 15, Զարվարդ Լալայեանց. 16, Զարվարդ Դէօղչայեանց. 17, Կատարինէ Միրզայեանց. 18, Ոսկի Սերեբրակեանց. 19, Սօֆիա Ստեփանեանց. 20, Եղիսաբէթ Ամիրեանց, եւ 21, Մարիամ Բուտաղեանց:

Հոգաբարձուք Յովհաննէս Խալափեանց
Յովհաննէս Միրզաբէկեանց.

Ի 20 Ապրիլ 1877 թ.

Շ. Ամ. Ի:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ.

Լոմբարդո-Ռիսան Արքեպ. ամառգրոց.

Մեր կողմերը արմատացած այն վատ սովորութիւնը, որը գիւղականները աղջիկ մը նշանելու ատեն պահանջում են խստիւ նշանադրուող աղջկից հարիւրաւոր անուանուած այն ծանր հարկը, որոյ մասին առաջին տարիներում Արարատիդ միջոցաւ բաղդ ունեցանք մեք խօսելու և յայտնեցինք դորան՝ց յառաջ եկած այն վատ հետևանքները. այժմ դարձեալ մեք բաղդ ունե-

ցանք ուրախութեամբ սրտի յայտնել այս նամակաւս՝ որ վաղուց չէ, որ այս կողմերն ևս ըստացվեցաւ Նորին Վեհափառութեան Գէորգ աղգայնամ Կաթուղիկոսի այս պակասութեանց բարեկարգութեան մասին անօրինած և սահմանած կանոնադրութիւնքը և սուրբ Կոնդակը. այս մասին մեծ համակրութիւն և շատ ու շատ գոհունակութիւնք են լսվում մեր սահմանի բնակիչներից։ Նորին Վեհ Օծութեան այդ իմաստսից Կոնդակից եւ նշանադրութեան մասին սահմանուած գեղեցիկ կարգադրութիւնից երեւում է, որ հասարակաց Հայրը նուրբ հեռատեսութեամբ և խորին կերպով ըմբռնելով իւր խնամոց յանձնեալ հօտի դրութիւնն և վիճակը, շատ խոհական, յարմարաւոր և մեր խեղճ ժողովրդոց օգտակար կանոնադրութիւնք բարեկարգել և սահմանել է իւր բազմաղբաղ և ծանրակշիռ գործերու մէջ անդամ չխնայելով իւր անգին ժամերը հասարակաց օգտին նուիրելու։

Մեր ազգը կարող է ներկայումս պարծիլ, որ ունի դարուս համապատասխան հասարակաց բարօրութեան, Եկեղեցեաց բարեկարգութեան համար աշխատող, ուսումնարանաց շինութեան և ծաղկման համար անձնձիր տքնող ճգնող մի ազգայնէն Կաթուղիկոս, որոյ ազգային մեծագործութիւնքը իւր անուանը փառք և իւր ազգին յաւիտենական պարծանք պիտոյ է լինին։

Ախալքալաքայ և Ծալկայի նահանգաց գործակատար հանգուցեալ համբաւաւոր Ստեփաննոս Ա. Բ. Դէմուրջոյեանցի տեղ նշանակուեցաւ այժմ Ախալքալաքի և Ծալկայի վիճակաց հոգևոր գործոց վերատեսուչ բարեկրօն Եղիշէ Քահանայ Տէր Ղազարեանցը, որը մի բարեշնորհ արիական, գործունեայ և հասկացող հոգևորական է և հմուտ հայկաբան. այս արժանավայել ընտրութեան համար առհասարակ թէ քաղաքացիք և թէ գիւղական բնակիչք շատ գոհ են, և ուրախ և մեծայոյս են, որ շնորհիւ մեր նոր առաջնորդ Գերապատիւ Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանցի և նորա փոխանորդ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանցի շատ խոհական և արժանավայել կարգադրութիւնք և օգտաւէտ բարեկարգութիւնք լինելու են և գործադրվելու. գործադրվելու եմ ասում, վասն զի շատ անդամ, ինչպէս փորձը մեզ ցոյց տված է, սահմանեալ շատ բարեկարգութիւնք մնում են առանց գործադրութեան շնորհիւ շահամոլ, տգէտ և անընդունակ գործակատարների, թէեւ այդպիսիները գիտէին պաշտօնական գործոց մէջ այնպէս ցոյց տալ, որ ոչինչ զանցաւութիւն չերևէր։

Ճշմարտութիւնը պահանջում է յիշել, որ Բարեկրօն Եղիշէ Քահանայ Տէր Ղազարեանցը — իւր արդիւնաւոր անդրանիկ ուսուցչութեամբը առաջինն եղաւ՝ որ տարածեց այս կողմերը Ախլքալակի և Նորա վիճակի մէջ ուսումնասիրութեան սերմը շատ դժուարութեանց և նախապաշարմանց յաղթելով. Նորանից առաջ այս մեր կողմերում հայերէն գրել և կարդալ գիտացող և հասկացողներին մատով էին ցոյց տալիս, ուսուցիչ մը գտնելը շատ հազուագիւտ էր։ Եղիշէ քահանայի ջերմ աշխատութեան շնորհիւն է՝ որ այժմ գտնվում է քիչ թէ շատ Ախլքալակում ուսման ճաշակը առած երիտասարդներ, ընթերցասէր պատանիներ, մեր ուսումնարանները կառավարող ուսուցիչներ և գիւղերում մի քանի յարգելի քահանաները Նորա աշակերտներէն են։

Անցեալ ամիսներում վիճակիս գիւղերից 7 քահանայացու տիրացուներ, որք այս տեղի ձայնագրութեան ուսուցիչ Կարբեցի Պ. Կարապետ Տէր Ցովակիմեանցի մօտ եկեղեցական ձայնագրութիւնը սովորում էին և այդ արուեստը աւարտելով Նորանից վկայական առած էին, կանչվեցան Թիֆլիզի Թեմական Ատենից հարցաքննութիւն տալու ընդհանրապէս, ուր ձայնագրութիւնից ևս քննվելով գովելի յառաջադիմութիւն էին ցոյց տուած ձայնագրութիւնից. այժմս ևս յիշեալ ուսուցիչը աշխատում է կատարելագործելու 7 տիրացուներ ևս։

ԿԱՐԱՊԵՏ Տ. Ս. ՄԱՐԳԱՐԵԱՆՑ։

Ի 20 Ապրէլի 1877 ամ

ԱԽԼՔԱԼԱԿ։